



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ 09(373) «05» հունիսի 2019թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
161	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 918-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 393-Ն որոշումը	
162	«Պետության և համայնքային սեփականություն հանդիսացող, օտարերկրյա քաղաքացիներին վարձակալության հանձնված և այգիներով զբաղեցված գյուղատնտեսական նշանակության հողերի օտարերկրյա քաղաքացիներին ուղղակի վաճառքի ձևով օտարման կարգը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 394-Ն որոշումը	
163	«Բազմամյա տնկարկների մշակության նպատակով վարձակալված հողերում ռոռզման կաթիլային համակարգով կահավորված այգի հիմնադրած Արցախի Հանրապետության քաղաքացիներին և իրավաբանական անձանց պետության և համայնքների սեփականության հողամասերի սեփականության իրավունքով անհատույց տրամադրման կարգը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 395-Ն որոշումը	
164	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի N 61 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 396-Ն որոշումը	
165	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 22-ի N 133-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 399-Ն որոշումը	
166	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 407-Ն որոշումը	
167	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 412-Ն որոշումը	
168	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 413-Ն որոշումը	
169	«2019 թվականի ամառային զորակոչը կազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 420-Ն որոշումը	
170	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 424-Ն որոշումը	
171	«Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական	

	բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 7-ի N 46-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 432-Ն որոշումը	
172	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 31-ի N 152 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 433-Ն որոշումը	
173	«Միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի կանոնադրությունն ու կազմը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի մայիսի 30-ի N 319-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 434-Ն որոշումը	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ	
174	ԱՀ Գերագույն դատարանի քրեական նյութ ԸԻԴ/0001/13/19 որոշումը	

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

23 մայիսի 2019թ.

N 393-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 918-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ջեռուցման օրերի առավելագույն քանակ սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 765-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 918-Ն որոշման 1¹-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1¹. Սահմանել Արցախի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող Ստեփանակերտի նախադպրոցական, դպրոցական, այլ հիմնարկներում, Արցախի Հանրապետության Շուշիի, Շահումյանի, Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Հադրութի և Քաշաթաղի շրջանների՝ սույն որոշման հավելվածում նշված և չնշված բնակավայրերում՝ 2018-2019 թվականներին Արցախի Հանրապետության շրջանների հիմնարկների ջեռուցման օրերի առավելագույն քանակ՝ անկախ ջեռուցման համար օգտագործվող էներգիայի աղբյուրից՝

1) Ստեփանակերտ քաղաքի նախադպրոցական և դպրոցական հիմնարկների համար՝ տարեկան 160 օր, այլ հիմնարկների համար՝ 138 օր.

2) Շուշիի շրջան՝ տարեկան 160 օր.

3) Շահումյանի շրջան՝ տարեկան 160 օր.

4) Ասկերանի շրջան՝ հավելվածում չնշված բնակավայրերում՝ տարեկան 151 օր.

5) Մարտակերտի շրջան՝ հավելվածում նշված և չնշված բնակավայրերում՝ տարեկան 165 օր.

6) Մարտունու շրջան՝ հավելվածում նշված և չնշված բնակավայրերում՝ տարեկան 162 օր.

7) Հադրութի շրջան՝ հավելվածում նշված և չնշված բնակավայրերում՝ տարեկան 166 օր.

8) Քաշաթաղի շրջան՝ հավելվածում նշված բնակավայրերում՝ 161 օր, հավելվածում չնշված բնակավայրերում՝ տարեկան 147 օր:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

23 մայիսի 2019թ.

N 394-Ն

ք. Ստեփանակերտ

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ,
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՎԱԾ
ԵՎ ԱՅԳԻՆԵՐՈՎ ՁԲԱՂԵՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ
ԶԵՎՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***նր նշում է***:

1. Սահմանել պետության և համայնքային սեփականություն հանդիսացող, օտարերկրյա քաղաքացիներին վարձակալության հանձնված և այգիներով զբաղեցված գյուղատնտեսական նշանակության հողերի օտարերկրյա քաղաքացիներին ուղղակի վաճառքի ձևով օտարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ,
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԵՎ
ԱՅԳԻՆԵՐՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ԳՑՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐՄԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են պետության և համայնքային սեփականություն հանդիսացող, օտարերկրյա քաղաքացիներին վարձակալության հանձնված և արտադրական նշանակության այգիներով զբաղեցված գյուղատնտեսական նշանակության հողերի օտարերկրյա քաղաքացիներին ուղղակի վաճառքի ձևով օտարման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) արտադրական նշանակության այգի՝ երեք տարեկան այգի, նվազագույնը 1 հեկտար մակերեսով, ոռոգման ջրով ապահովված և ոռոգման կաթիլային (ենթահողային) համակարգով կահավորված.

2) ենթահողային ոռոգման համակարգ՝ ցածր ճնշումային ոռոգման համակարգ, որը բաղկացած է գլխավոր, բաժանարար, դաշտային և ջրման խողովակաշարերից, գլխավոր և բաժանարար խողովակաշարերը տեղադրված են հողի մակերեսից 0,8 մետր խորության վրա և ջուրը տեղափոխում են ոռոգման աղբյուրից մինչև ջրվող տարածք, խողովակների տրամագծերը որոշվում են հիդրավլիկական և տեխնիկատնտեսական հաշվարկներով, ջրման խողովակները խոնավությունը բաց են թողնում իրենց ամբողջ պատերով, և տեղադրվելով գրունտում դրանք զերծ են մնում դրսի միջավայրի տարբեր ազդեցություններից.

3) ոռոգման կաթիլային համակարգ՝ ցածր ճնշումային ոռոգման համակարգ, որը բաղկացած է գլխավոր, բաժանարար, դաշտային և ջրման խողովակաշարերից, գլխավոր և բաժանարար խողովակաշարերը ջուրը տեղափոխում են ոռոգման աղբյուրից մինչև ջրվող տարածք, խողովակների տրամագծերը որոշվում են հիդրավլիկական և տեխնիկատնտեսական հաշվարկներով, ջրման խողովակաշարերի վրա տեղադրում են կաթոցիկներ, որի բաղկացուցիչ մասն է կազմում ճնշման և ջրի ծախսի կարգավորիչ թաղանթը.

4) ուղղակի վաճառքի ձևով օտարում (այսուհետ՝ օտարում)՝ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի սեփականության իրավունքի փոխանցում.

5) օտարերկրյա քաղաքացի՝ Արցախի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող և Արցախի Հանրապետությունում այգեգործությամբ զբաղվելու նպատակով պետության և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողեր վարձակալված և առանց Արցախի Հանրապետության աջակցության արտադրական նշանակության այգի հիմնադրած ֆիզիկական անձ:

2. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ

3. Պետության սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ Արցախի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն) որոշմամբ:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ համայնքի ղեկավարի կողմից՝ համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանած պայմաններով՝ կառավարության որոշմամբ տրված թույլտվության հիման վրա:

5. Պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը օտարվում են ուղղակի վաճառքի ձևով, որի գինը սահմանվում է տվյալ հողամասի կադաստրային գնի չափով:

3. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում արտադրական նշանակության այգի հիմնած օտարերկրյա քաղաքացի հանդիսացող վարձակալները հողի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով հայտ են ներկայացնում (համաձայն ձևի)

1) համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող հողամասերի մասով՝ համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարին.

2) համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի մասով՝ համապատասխան համայնքի ղեկավարին (Ստեփանակերտ քաղաքում՝ Ստեփանակերտի քաղաքապետին):

7. Օտարերկրյա քաղաքացիները հայտերը կարող են ներկայացնել միայն ռոռզման կաթիլային կամ ենթահողային համակարգը տեղադրելուց, տունկը կատարելուց և հողերի նպատակային նշանակությունը փոխելուց երեք տարի հետո:

8. Օտարերկրյա քաղաքացիների կողմից սույն կարգի 7-րդ կետում նշված աշխատանքները պետք է կատարվեն բացառապես սեփական ներդրումներով:

9. Սույն կարգի 6-րդ կետում նշված տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները ստացած հայտերը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում են Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն):

10. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով՝ օտարերկրյա քաղաքացու կողմից վարձակալած հողատարածքում հիմնադրված այգու արտադրական նշանակությունը պարզելու նպատակով:

11. Հանձնաժողովը տասնօրյա ժամկետում ստուգում է գյուղատնտեսական նշանակության հողատարածքի մակերեսը, մշակվող բազմամյա տնկարկի տեսակը, ռոռզման կաթիլային կամ ենթահողային համակարգի առկայությունը, հողատարածքի ռոռզման ջրով ապահովվածությունը և Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին է ներկայացնում եզրակացություն հիմնադրված այգու արտադրական նշանակության վերաբերյալ:

12. Հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում կառավարության թույլտվությունը ստանալու նպատակով օտարերկրյա քաղաքացիներից ստացած հայտերը, հանձնաժողովի դրական եզրակացությունը և կից փաստաթղթերը նախարարությունն ուղարկում է կառավարություն:

13. Կառավարությունը ստացած փաստաթղթերն ուսումնասիրում է կոլեգիալ կազմով՝ Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության, Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության, Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության, Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Արցախի Հանրապետության համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարի (պետության

սեփականություն հանդիսացող հողի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով) կամ Ստեփանակերտի քաղաքապետի (Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում գտնվող հողի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով) կամ Արցախի Հանրապետության համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարի և Արցախի Հանրապետության համապատասխան շրջանի համապատասխան համայնքի ղեկավարի (համայնքային սեփականություն հանդիսացող հողի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով) պարտադիր համաձայնությամբ:

14. Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությանը կարող են մասնակցել նաև այլ գերատեսչություններ, ընդ որում՝ որևէ գերատեսչության բացասական կարծիքի դեպքում կառավարությունը հողամասի օտարման կամ օտարման թույլտվության մասին որոշում չի ընդունում:

15. Պետության սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումն իրականացվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշման, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումն՝ կառավարության որոշմամբ տրված թույլտվության հիման վրա:

16. Տրամադրված թույլտվությունը հիմք է հանդիսանում հողամասի օտարման պայմանագրի կնքման, նոտարական վավերացման և պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցման համար:

17. Պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման պայմանագրերում նշվում են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման այլ պայմաններ և սահմանափակումներ:

4. ՕՏԱՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Օտարված հողամասերն օգտագործվում են իրավական ակտերով, քաղաքաշինական ու հողաշինական փաստաթղթերով սահմանված և պայմանագրերում նշված նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան:

19. Արգելվում է օտարված բազմամյա տնկարկ հողատեսքի գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրումն այլ նպատակային և գործառնական նշանակության հողերի, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով հատուկ նշանակության կամ հատուկ պահպանվող տարածքների հողերի:

20. Օտարերկրյա քաղաքացուն օտարված հողամասի Արցախի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող կամ քաղաքացիություն չունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձին օտարելու կամ օտարերկրյա պետությունում գրավադրելու համար պահանջվում է Արցախի Հանրապետության կառավարության սույն կարգով նախատեսված ընթացակարգով տրամադրված համաձայնությունը:

21. Առանց կառավարության որոշմամբ տրամադրված համաձայնության կատարված գործարքները համարվում են առոչինչ՝ հիմք են հանդիսանում օտարված հողամասերի նկատմամբ իրավունքների հարկադիր կարգով դադարեցման համար:

22. Օտարված հողամասերի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով կարող են դադարեցվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված հիմքերով՝ դատական կարգով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Արցախի Հանրապետության _____ շրջանի
_____ համայնքի ղեկավարին
(վարչակազմի ղեկավարին)

Հ Ա Յ Տ

Դիմող _____
(օտարերկրյա քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը, ազգությունը)

Հաշվառման վայրը _____

ԱՀ-ում բնակության վայրը _____

հեռախոսահամարը _____

Անձնագրի համարը _____

Վարձակալած պետական կամ համայնքային

սեփականություն (ընդգծել)հանդիսացող

հողամասի գտնվելու վայրը _____

Մշակվող հողամասի մակերեսը _____

Մշակվող բազմամյա տնկարկի տեսակը _____

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ իմ կողմից վարձակալած հողամասում հիմնել եմ արտադրական նշանակության այգի, և միաժամանակ խնդրում եմ տրամադրել թույլտվություն (համաձայնություն) այդ հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով:

Լրացուցիչ տեղեկություններ _____

(անուն,ազգանուն)

(ստորագրությունը)

« _____ » _____ 20 ____ թ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

23 մայիսի 2019թ.

N 395-Ն

ք. Ստեփանակերտ

**ԲԱԶՄԱՍՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ
ՀՈՂԵՐՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԿԱՀԱՎՈՐՎԱԾ
ԱՅԳԻ ՀԻՄՆԱԴՐԱԾ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ
ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին կետի 4.1-ին ենթակետի դրույթները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել բազմամյա տնկարկների մշակության նպատակով վարձակալած հողերում ռոտզման կաթիլային համակարգով կահավորված այգի հիմնադրած Արցախի Հանրապետության քաղաքացիներին և իրավաբանական անձանց պետության և համայնքների սեփականության հողամասերի սեփականության իրավունքով անհատույց տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԳ

**ԲԱԶՄԱՍՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՉԱԿԱԼԱՍԾ
ՀՈՂԵՐՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԿԱՀԱՎՈՐՎԱԾ ԱՅԳԻ
ՀԻՄՆԱԴՐԱԾ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԵՎ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են պետության և համայնքային սեփականություն հանդիսացող, Արցախի Հանրապետության քաղաքացիներին և իրավաբանական անձանց բազմամյա տնկարկների մշակության նպատակով վարձակալության հանձնված և ռոռզման կաթիլային համակարգով կահավորված այգիներով զբաղեցված գյուղատնտեսական նշանակության հողերի Արցախի Հանրապետության քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով անհատույց տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) արտադրական նշանակության այգի՝ նվազագույնը 1 հեկտար մակերեսով, տունկը կատարված, ռոռզման ջրով ապահովված և ռոռզման կաթիլային համակարգով կահավորված գյուղատնտեսական նշանակության հողատարածք:

2) ենթահողային ռոռզման համակարգ՝ ցածր ճնշումային ռոռզման համակարգ, որը բաղկացած է գլխավոր, բաժանարար, դաշտային և ջրման խողովակաշարերից, գլխավոր և բաժանարար խողովակաշարերը տեղադրված են հողի մակերեսից 0,8 մետր խորության վրա և ջուրը տեղափոխում են ռոռզման աղբյուրից մինչև ջրվող տարածք, խողովակների տրամագծերը որոշվում են հիդրավլիկական և տեխնիկատնտեսական հաշվարկներով, ջրման խողովակները խոնավությունը բաց են թողնում իրենց ամբողջ պատերով, և տեղադրվելով գրունտում դրանք զերծ են մնում դրսի միջավայրի տարբեր ազդեցություններից:

3) հիդրանտներով ռոռզում՝ ջրման փականներով շարժական խողովակաշարով ռոռզում, խողովակաշարի փականների դիրքն ուղղահայաց է, իսկ խողովակն անցնում է հողի տակով, ջրի էլքը կարգավորվում է փականի բացվածքի չափով:

4) ռոռզման կաթիլային համակարգ՝ ցածր ճնշումային ռոռզման համակարգ, որը բաղկացած է գլխավոր, բաժանարար, դաշտային և ջրման խողովակաշարերից, գլխավոր և բաժանարար խողովակաշարերը ջուրը տեղափոխում են ռոռզման աղբյուրից մինչև ջրվող տարածք, խողովակների տրամագծերը որոշվում են հիդրավլիկական և տեխնիկատնտեսական հաշվարկներով, ջրման խողովակաշարերի վրա տեղադրում են կաթոցիկներ, որի բաղկացուցիչ մասն է կազմում ճնշման և ջրի ծախսի կարգավորիչ թաղանթը:

3. Սույն կարգի իմաստով ռոռզման կաթիլային համակարգով կահավորված այգիներին հավասարեցվում են նաև ռոռզման ենթահողային համակարգով կահավորված կամ հիդրանտներով ռոռզվող (միասին այսուհետ՝ ռոռզման կաթիլային համակարգ) այգիները:

4. Արցախի Հանրապետության քաղաքացիները և իրավաբանական անձինք կարող են անհատույց սեփականության իրավունքով ձեռք բերել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը միայն արտադրական նշանակության այգի հիմնադրելու դեպքում:

5. Սույն կարգի դրույթները չեն տարածվում Արցախի Հանրապետության այն քաղաքացիների և իրավաբանական անձանց վրա, որոնք վարձակալած հողամասում

այգի հիմնադրելու նպատակով տունը կատարելուց հետո մինչև այդ հողերի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու համար համապատասխան համայնքի կամ վարչակազմի ղեկավարին դիմելը կատարել են վարձակալած հողամասի ամբողջականությունը խախտող այդ հողամասի տիրապետման կամ օգտագործման հետ կապված ցանկացած գործարք (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի):

2. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

6. Պետության սեփականություն հանդիսացող հողամասերի սեփականության իրավունքով անհատույց տրամադրումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ Արցախի Հանրապետության համապատասխան շրջանի վարչակազմի, իսկ Ստեփանակերտ քաղաքում՝ Ստեփանակերտի քաղաքապետի որոշմամբ:

7. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի սեփականության իրավունքով անհատույց տրամադրումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ համայնքի ղեկավարի կողմից՝ համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանած պայմաններով:

3. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ռոտզման կաթիլային համակարգով կահավորված այգի հիմնած Արցախի Հանրապետության քաղաքացիները և իրավաբանական անձինք հողի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով հայտ են ներկայացնում (համաձայն ձևի)՝

1) համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող հողամասերի մասով՝ համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարին:

2) համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի մասով՝ համապատասխան համայնքի ղեկավարին (Ստեփանակերտ քաղաքում՝ Ստեփանակերտի քաղաքապետին):

9. Արցախի Հանրապետության քաղաքացիները և իրավաբանական անձինք հայտերը կարող են ներկայացնել միայն ռոտզման կաթիլային համակարգերը տեղադրելուց, տունը կատարելուց և հողերի գործառնական նշանակությունը փոխելուց հետո:

10. Սույն կարգի 8-րդ կետում նշված տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները ստացած հայտերը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում են Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն):

11. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով՝ հայտատուների կողմից վարձակալած հողատարածքում հիմնադրված այգում ռոտզման կաթիլային համակարգի և տունը կատարված լինելու հանգամանքի առկայությունը պարզելու նպատակով:

12. Հանձնաժողովը տասնօրյա ժամկետում ստուգում է գյուղատնտեսական նշանակության հողատարածքի մակերեսը, մշակվող բազմամյա տնկարկի տեսակը, ռոտզման կաթիլային համակարգի առկայությունը և Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին է ներկայացնում եզրակացություն՝ հիմնադրված այգու վերաբերյալ:

13. Հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում նախարարությունը ստացած հայտերը և եզրակացությունն ուղարկում է համապատասխան համայնքի ղեկավարին կամ վարչակազմի ղեկավարին՝ հողամասի անհատույց սեփականության իրավունքով տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով:

14. Պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նվիրատվության պայմանագրերում նշվում են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման այլ պայմաններ և սահմանափակումներ:

15. Պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նվիրատվության պայմանագրերում ամրագրվում են նաև նվիրատվության կարգով տրամադրված հողամասերի նկատմամբ տնօրինման իրավունքի հետագայում օտարերկրյա քաղաքացիներին փոխանցման անթույլատրելիության վերաբերյալ դրույթներ:

16. Անհատույց սեփականության իրավունքով տրամադրվող հողամասի չափը չի կարող գերազանցել 15 հեկտարը: 15 հեկտարը գերազանցելու դեպքում հողամասի գերազանցող մասը կարող է տրամադրվել՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի N 61 որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի:

4. ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Նվիրատվությամբ տրամադրված հողամասերն օգտագործվում են իրավական ակտերով, քաղաքաշինական ու հողաշինական փաստաթղթերով սահմանված և պայմանագրերում նշված նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան:

18. Արգելվում է նվիրատվությամբ տրամադրված բազմամյա տնկարկ հողատեսքի գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրումն այլ նպատակային և գործառնական նշանակության հողերի, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով հատուկ նշանակության կամ հատուկ պահպանվող տարածքների հողերի:

19. Սույն կարգով նախատեսված հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ձեռք բերելուց հետո հողամասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա հիմնադիրներին (մասնակիցներին) հանձնման, այդ թվում՝ պարտատերերի պահանջների բավարարման կամ բռնագանձման հետևանքով հողամասի սեփականատիրոջ փոփոխության դեպքում, անկախ այն հանգամանքից, թե հողամասը ձեռք է բերվում հատուցմամբ կամ անհատույց, ձեռք բերողը համապատասխանաբար պետական կամ համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը:

20. Սույն կարգի 19-րդ կետով նախատեսված դեպքերում իրավունքների պետական գրանցումը մերժվում է, եթե ձեռք բերողը չի ներկայացնում հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը: Կադաստրային արժեքը վճարելու պահանջը չի տարածվում պետությանը կամ համայնքին օտարվող հողամասերի վրա:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Արցախի Հանրապետության _____ շրջանի
_____ համայնքի ղեկավարին
(վարչակազմի ղեկավարին, Ստեփանակերտի քաղաքապետին)

Հ Ա Յ Տ

Դիմող _____
(ազգանունը, անունը, հայրանունը, (անվանումը))

Բնակության հասցեն (գտնվելու վայրը) _____

հեռախոսահամարը _____

ՀՎՀՀ _____

Անձնագրի համարը _____

Վարձակալած պետական կամ համայնքային

սեփականություն (ընդգծել) հանդիսացող

հողամասի հասցեն _____

Մշակվող հողամասի մակերեսը _____

Մշակվող բազմամյա տնկարկի տեսակը _____

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ իմ կողմից վարձակալած հողամասում հիմնել եմ
ոռոգման կաթիլային կամ ենթահողային համակարգով կահավորված կամ
հիդրանտներով ոռոգվող (ընդգծել) այգի և միաժամանակ խնդրում եմ տվյալ
հողամասն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել ինձ:

Լրացուցիչ տեղեկություններ _____

(անուն,ազգանուն)

(ստորագրությունը)

Կ.Տ.

« ____ » _____ 20 ____ թ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

23 մայիսի 2019թ.

N 396-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՑԵՄԲԵՐԻ 26-Ի N 61 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 61 որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ (բացառությամբ 1-ին կետի 4.1-ին ենթակետի) և 65-րդ հոդվածներով սահմանված դեպքերում ու կարգով.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

23 մայիսի 2019թ.

N 399-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի N 133-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 22-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 133-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ուժը կորցրած ճանաչել որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը.

2) որոշման 3-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքից» բառերով,

բ. 1-ին ենթակետի «բ» պարբերությունում և 5-րդ ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով,

գ. 5-րդ ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի» բառերով.

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

4) ուժը կորցրած ճանաչել որոշմամբ հաստատված N 2 հավելվածը:

2. Սահմանել, որ սույն որոշման պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը սկսած և դեռևս չավարտված գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված՝ գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության և ֆինանսավորման, գնահատող հանձնաժողովի կազմավորման և գործունեության, օրենքով նախատեսված գնում կատարելու ընթացակարգերի կիրարկման կարգերը, ինչպես նաև հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները:

2. Սույն կարգով հրավերին և պայմանագրին ներկայացվող պայմանները հանդիսանում են հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները: Հրավերում և պայմանագրում հիմնական պայմանների ներառման, ինչպես նաև գնումների մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների պահպանման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն: Ընդ որում, գնման գործընթաց կազմակերպելիս պատվիրատուներն առաջնորդվում են լիազոր մարմնի սահմանած հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերով:

3. Գնման գործընթացի առանձնահատկություններով պայմանավորված՝ այլ իրավական ակտերով կարող են սահմանվել սույն կարգի 1-ին կետով նախատեսված կարգերի կիրարկման, ինչպես նաև հրավերի և պայմանագրի հիմնական պայմանների հետ կապված՝ սույն կարգով չնախատեսված նորմեր:

II. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

4. Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

- 1) գնումների պլանավորում.
- 2) գնման գործընթացի կազմակերպում.
- 3) պայմանագրի կնքում.
- 4) պայմանագրի կատարում:

III. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

5. Յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝

- 1) գնումները համակարգողը.
- 2) պատասխանատու ստորաբաժանումը.
- 3) գնահատող հանձնաժողովը:
6. Պատվիրատուի ղեկավարը՝

1) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական կառավարման մարմիններում՝ մարմնի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձը.

2) պետական հիմնարկներում՝ հիմնարկի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված անձը.

3) պետական ոչ առևտրային կազմակերպություններում՝ կազմակերպության ղեկավարն է (գործադիր մարմին) կամ վերջինիս կողմից լիազորված անձը.

4) պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններում՝ գործադիր մարմնի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված անձը.

5) պետության կամ պետական ոչ առևտրային կամ պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից ձևավորված միավորումներում (միություններում)՝ միավորման գործադիր մարմնի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված անձը.

6) պետությունից կամ պետական ոչ առևտրային կամ պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձանց մոտ՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված անձը.

7) հանրային կազմակերպություններում՝ կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը:

7. Պատվիրատուի ղեկավարը՝

1) սահմանում է՝

ա. գնումները համակարգող,

բ. պատասխանատու ստորաբաժանում,

գ. գնահատող հանձնաժողով՝ բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի.

2) բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի

ա. կնքում է պայմանագիրը,

բ. հաստատում է գնման ընթացակարգի արձանագրությունը:

8. Գնումները համակարգողը՝

1) պատասխանատու է պատվիրատուի՝ գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման համար.

2) եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը գնումների մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին.

3) իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները.

4) կազմում և պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում տվյալ գնման ընթացակարգի արձանագրությունը և պայմանագիրը:

9. Սույն կարգի իմաստով շինարարական ծրագրերը ներառում են կառուցման, վերակառուցման, վերանորոգման, ամրացման, ներքին հարդարման, վերականգնման, նորոգման և հիմնանորոգման, այդ թվում՝ ճանապարհաշինության, ճանապարհների ասֆալտապատման կամ ցանկացած տիպի այլ շինարարական աշխատանքները:

10. Պատասխանատու՝

1) ստորաբաժանումը՝

ա. կազմում և հաստատում է գնման հայտը,

բ. հետևում է պայմանագրի կողմի (կապալառու, մատակարար և այլն)՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացին և դրա արդյունքներով պատվիրատուի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ,

գ. ընդունում է պայմանագրի կատարման արդյունքը,

դ. ներկայացնում է այն անձանց (թեկնածուների) ցուցակը, որոնք առաջադրվում են գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով,

ե. անհրաժեշտության դեպքում առաջարկ է ներկայացնում գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

2) ստորաբաժանում կարող են սահմանվել պատվիրատուի՝

ա. համապատասխան ստորաբաժանումը,

բ. ձևավորած մասնագիտական խումբը, որի կազմում կարող են նաև ընդգրկվել այլ մարմինների կամ կազմակերպությունների ներկայացուցիչներ.

գ. պաշտոնատար անձը, եթե տվյալ պատվիրատուն չունի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ.

3) ստորաբաժանման լիազորությունները չեն կարող վերապահվել գնումները համակարգողին.

4) ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից: Ընդ որում, անձը չի կարող մասնակցել գնման հայտի նախագծմանը, եթե վերջինիս մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձը (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրած կամ բաժնեմաս ունեցող կազմակերպությունը կարող է հանդիսանալ տվյալ գնման գործընթացի հնարավոր մասնակից: Այդ կապակցությամբ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձն ստորագրում է նման հնարավորության բացակայության վերաբերյալ համապատասխան հայտարարություն:

11. Գնահատող հանձնաժողովը՝

1) հաստատում է գնումների կամ նախաորակավորման հայտարարության և հրավերի տեքստերը.

2) փոփոխություններ է կատարում գնումների հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման հայտարարության տեքստերում.

3) պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ.

4) բացում և գնահատում է հայտերը.

5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին).

6) գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

12. Գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ): Հանձնաժողովի անդամը չի կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե վերջինիս մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձը (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս ունեցող կազմակերպությունը կարող է հանդիսանալ գնումների տվյալ գործընթացի հնարավոր մասնակից: Այդ կապակցությամբ հանձնաժողովի անդամն ստորագրում է նման հնարավորության բացակայության վերաբերյալ համապատասխան հայտարարություն: Հանձնաժողովի կազմում հանձնաժողովի անդամի կարգավիճակով չեն կարող ընդգրկվել գնումները համակարգողը կամ վերջինիս պաշտոնատար անձը:

IV. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

13. Գնումների պլանի ձևը և դրա լրացման ու հրապարակման կարգը սահմանում է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարը, իսկ գնումների միասնական անվանացանկի բացվածքը՝ ըստ թվային ծածկագրի յուրաքանչյուր բաժնի խմբերի, դասերի և դասակարգիչների սահմանում և տեղեկատուում հրապարակում է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

14. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում, գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Գնումների պլանում կատարվող փոփոխությունները և լրացումները, պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում գնման ձևի փոփոխությունների հիմնավորումների հետ միասին (այն դեպքում, եթե գնման ձև է սահմանվում Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված գնման ընթացակարգը), տրամադրվում են Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ դրանք հաստատվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

15. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

16. Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանում փոփոխություններ կատարվում են՝

1) պատվիրատուի կողմից, եթե փոփոխությունը չի ենթադրում բյուջետային ծախսերի դասակարգման փոփոխություն:

2) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե փոփոխությունը ենթադրում է բյուջետային ծախսերի դասակարգման փոփոխություն:

17. Պատվիրատուի այլ միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանում փոփոխությունները կատարվում են տվյալ գնումների պլանի հաստատման կարգով:

18. Օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիրը կնքվում է գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում:

19. Շինարարական ծրագրերի գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա, եթե տվյալ շինարարական ծրագրի համար նախագծային փաստաթղթերի առկայությունը և (կամ) դրանց փորձաքննությունը պարտադիր է: Առանց նախագծային փաստաթղթերի առկայության շինարարական ծրագրերի գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվել չեն կարող, եթե Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

20. Բացառությամբ Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների՝ մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը պատվիրատուի ղեկավարը հաստատում է գնումների պլանը և հինգ աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով հրապարակում է գնումների էլեկտրոնային տեղեկատուում:

V. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

21. Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում է՝

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) գնումները համակարգող:

22. Եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող վաթսուներեք աշխատանքային օրվա ընթացքում, իսկ սույն կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված գնումների, վառելիքի, քսայուղերի, գյուղատնտեսական նշանակության ապրանքների, լաբորատոր հետազոտությունների, փորձաքննությունների և ավիասպասարկման ծառայությունների դեպքում պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը,

բ. մասնակիցների որակավորման չափանիշները, այդ թվում՝

- «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, եթե Արցախի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ,

- շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Արցախի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակ, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության,

գ. ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար պահանջող լիցենզիաների ցանկը, եթե կնքվելիք պայմանագրի կատարումը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեություն,

դ. գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը,

ե. ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ժամկետները, այդ թվում՝ վերջնաժամկետը.

2) գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը՝ ըստ հանձնաժողովի կազմում այդ անձանց ընդգրկման առաջնահերթության:

23. Բացառությամբ Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ:

24. Գնման ընթացակարգը կազմակերպելիս՝ Օրենքի 3-րդ բաժնով նախատեսված պայմաններից բացի պետք է հաշվի առնել, որ՝

1) էթե գնման առարկայի գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորը, ապա գնումը կարող է կատարվել Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի հիման վրա՝ անկախ գնման առարկան Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված մասնակիցների հետ կնքված շրջանակային համաձայնագրերում ներառված լինելու հանգամանքի.

2) էթե գնման առարկայի գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն գերազանցում է գնումների բազային միավորը, սակայն չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա գնումը կարող է իրականացվել պարզեցված ընթացակարգով, էթե գնման առարկան ներառված չէ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված մասնակիցների հետ կնքված շրջանակային համաձայնագրերում.

3) գնումը կատարվում է ապրանքի, աշխատանքի կամ ծառայության բորսաներից ձեռքբերման ընթացակարգով՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում և կարգով.

4) հետևյալ գնումները կարող են կատարվել Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի հիման վրա՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով՝

1. բնական գազի մատակարարում
2. էլեկտրաէներգիայի մատակարարում
3. հեռախոսակապ, ինտերնետային կապ, կապուղիների վարձակալություն
4. ոռոգման, խմելու, տեխնիկական և արդյունաբերական ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում
5. կենտրոնացված ջեռուցում
6. իրավասու մարմնի տրամադրած իրավական կարգավորման կամ վարչական նորմի հիմքով որպես գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության միակ մատակարար (կապալառու, կատարող) հանդիսացող անձից տվյալ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերում
7. պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող՝ ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, ինչպես նաև ռազմական կարիքների ապահովման նպատակով անշարժ գույքի ձեռքբերում
8. քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների հեղինակային հսկողություն
9. հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության հաղորդումների պատրաստում և հեռարձակում
10. տպագիր կամ էլեկտրոնային հրատարակումների, զանգվածային լրատվության միջոցների ծառայություններ
11. բարձրագույն և հետբուհական ուսուցում
12. լրացուցիչ կրթության ուսուցում
13. հանրակրթական դպրոցների ուսուցում
14. երաժշտական դպրոցների ուսուցում
15. երեկոյան և հեռակա դպրոցների ուսուցում
16. հատուկ ընդհանուր կրթության ուսուցում
17. ներառական կրթության ուսուցում
18. մասնագիտացված հանրակրթական ուսուցում
19. արտադպրոցական ուսուցում
20. արհեստագործական ուսուցում
21. միջին մասնագիտական ուսուցում

22. անշարժ գույքի վարձակալություն և ձեռքբերում
23. հիվանդանոցային ծառայություններ
24. արտահիվանդանոցային ծառայություններ
25. հանրային առողջապահական ծառայություններ
26. առողջապահական հարակից ծառայություններ
27. տուն-ինտերնատների ծառայություն
28. պրոթեզներ, պրոթեզա-օրթոպեդիկ նյութեր, պրոթեզավորման և պրոթեզների տեղադրման ծառայություններ
29. առողջարարանային բուժման և հանգստյան տների ուղեգրեր
30. պաշտոնական պատվիրակությունների ընդունման, արտասահմանյան այցելությունների կազմակերպման նպատակով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ բացառությամբ օդային փոխադրումների գործակալներից ավիատոմսերի ձեռքբերման
31. անվճարունակության (անանկության) գործերի կառավարիչների ծառայություն
32. ինքնաթիռի տեխնիկական սպասարկման ծառայություններ
33. բանկային սպասարկման ծառայություններ
34. փոստային կապի ծառայություն
35. գնման առարկան արտադրած կամ վերջինիս միակ ներկայացուցիչ հանդիսացող անձից գնման առարկայի տեխնիկական սպասարկման ծառայությունների՝ ներառյալ սպասարկման համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում
36. պետության ստեղծած կազմակերպությունից ապրանքի, աշխատանքի և ծառայության ձեռքբերում, եթե տվյալ կազմակերպության ստեղծման նպատակը՝ կանոնադրությամբ նախատեսված հիմնական գործունեության առարկան, գնման առարկա հանդիսացող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումն է
37. Արցախի Հանրապետության շքանշանների, Արցախի Հանրապետության մեդալների, ինչպես նաև Արցախի Հանրապետության գերատեսչական մեդալների և դրանց տուփերի պատրաստում
38. աղբահանության ծառայությունների ձեռքբերում
39. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից սահմանված պահանջներին և նվազագույն սակագներին համապատասխան՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ծառայությունների ձեռքբերում
40. մշակութային արժեքներ հանդիսացող թանգարանային, հնագիտական, ազգագրական, պատմական, կրոնական, գեղարվեստական ու գիտական նշանակության առարկաներ և ստեղծագործություններ, արվեստի եզակի ստեղծագործություններ, ինչպես նաև մշակույթի բնագավառի կատարողների ներկայացումներ և կատարումներ
41. պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների գիտավերականգնողական աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ
42. ավիափոխադրում իրականացնող կազմակերպությունների պաշտոնական կայքերում հրապարակային օֆերտայով առաջարկվող ավիատոմսերի՝ էլեկտրոնային եղանակով ձեռք բերում
43. հակառեզուս իմունոգլոբուլինի ձեռքբերում

5) գնումները կարող են կատարվել Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի հիման վրա հետևյալ դեպքերում՝

ա. գնումն իրականացվում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված արտակարգ իրավիճակների կամ օտարերկրյա պետությունների տարածքներում տեղի ունեցած բնական աղետների հետևանքով առաջացած կամ հրատապ համարվող կարիքների բավարարման նպատակով: Այս հիմքով պետության կարիքների համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը կարող է իրականացվել առանց տվյալ գնումը կատարելու համար ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու հանգամանքի, Արցախի Հանրապետության կառավարության համաձայնությամբ, տվյալ կամ հաջորդող բյուջետային տարիներին գումարները նախատեսելու պայմանով: Մույն ենթակետի համաձայն հրատապ է համարվում այն կարիքը, որը պետք է ամբողջ ծավալով բավարարվի՝ պայմանագրի կատարման արդյունքն ամբողջ ծավալով ընդունվի գնման պահանջի ծագման օրվանից հաշված մինչև երեսուն օրացուցային օրվա ընթացքում, պայմանով, որ հրատապ համարվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Մույն ենթակետի իմաստով հրատապ է համարվում նաև ավիասպասարկման ծառայությունների գնումը, եթե ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ պաշտոնական գործուղումը թույլատրող իրավական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային այլ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է,

բ. պետության կարիքների համար գնումների դեպքում Արցախի Հանրապետության կառավարության կողմից անհետաձգելի համարված այլ դեպքերում,

գ. եթե տվյալ գնման առարկան ձեռք բերելու նպատակով հայտարարված գնման մրցակցային ընթացակարգն առնվազն երկու անգամ հայտարարվել է չկայացած՝ բացառությամբ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կամ տվյալ գնումը կատարելու համար նոր ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքերի,

դ. շինարարական ծրագրերի իրականացման ընթացքում տեխնիկական կամ հեղինակային հսկողության ծառայություններ մատուցող անձի կողմից պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում, պայմանով, որ ծառայության մատուցումը պետք է սկսվի այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

25. Պատասխանատու ստորաբաժանումը գնման հայտը՝ հերթական համարակալումով, իր կողմից դրա հաստատվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը գրությամբ փոխանցում է գնումները համակարգողին:

26. Գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում գնահատում է գնման հայտի կազմման համապատասխանությունը գնումների մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Եթե արձանագրվում է անհամապատասխանություն, ապա գնման հայտը վերադարձվում է պատասխանատու ստորաբաժանմանը՝ նշելով արձանագրված անհամապատասխանությունները, որն ուղղում և երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումները համակարգողին է ներկայացնում ճշտված գնման հայտը: Արձանագրված անհամապատասխանության հետ չհամաձայնելու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում գնման հայտը հետ է վերադարձնում գնումները համակարգողին, որն այն ստանալուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին: Զեկուցագիրն ստանալու օրը պատվիրատուի ղեկավարը՝

1) հանձնարարում է պատվիրատուի իրավաբանական ծառայությանը երկու աշխատանքային օրվա ընթացքում տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր:

2) իրավական եզրակացությունն ստանալուց հետո հանձնարարում է՝
ա. գնումները համակարգողին՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպել հիմք ընդունելով ներկայացված գնման հայտը, եթե իրավական եզրակացությամբ զեկուցագիրը համարվել է անհիմն, կամ՝

բ. պատասխանատու ստորաբաժանմանը, ըստ իրավական եզրակացության, վերանայել գնման հայտը:

27. Գնման գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով պատվիրատուները կարող են ընթացիկ տարվան հաջորդող տարվա գնման գործընթացները կազմակերպել ընթացիկ տարվա հուլիսի 1-ից սկսած՝ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված կարգով:

Պատվիրատուները պարբերաբար օգտագործվող որոշ ապրանքատեսակների գնման գործընթաց կազմակերպելիս՝ նախահաշվային գները սահմանելիս, որպես ուղենիշային գներ պետք է հաշվի առնեն Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկատուում հրապարակված տվյալ ապրանքների գները:

Եթե տվյալ տարվա համար առանձին ընթացակարգի մասով նախատեսվող ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի երեսունապատիկը, ապա տվյալ գնման ընթացակարգի քարտուղարությունն իրականացնում է Գնումների աջակցման կենտրոնը:

VI. ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

28. Պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով սույն կարգի 26-րդ կետով նախատեսված գրավոր հանձնարարականը և գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը, որը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում: Գնահատող հանձնաժողովի՝

1) կազմը բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, որոնք սահմանվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության դեպքում նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն:

2) գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ:

3) նիստն իրավագոր չլինելու դեպքում դրա մասին հայտնի դառնալու պահին քարտուղարը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, որը հետևյալ հաջորդականությամբ՝

ա. ոչ ավելի, քան երկու աշխատանքային օրով կասեցնում է գնման գործընթացը,

բ. ապահովում է տվյալ անդամի ներկայանալը հանձնաժողովի նիստին կամ տվյալ անդամի փոխարեն, պատասխանատու ստորաբաժանման առաջարկության հիման վրա, նշանակում է հանձնաժողովի նոր անդամ,

գ. սահմանում է նիստի անցկացման օրը և ժամը, որը չպետք է ուշ լինի գնման ընթացակարգի կասեցման վերջնաժամկետից:

4) որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել հանձնաժողովի նիստին ներկա անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք և քվեարկում է կողմ կամ դեմ:

Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է.

5) նիստերը սղագրվում կամ տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է.

6) անդամները և քարտուղարը պարտավոր են ապահովել մասնակիցների կողմից որպես գաղտնի նշված տեղեկությունների գաղտնիությունը և Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում դրանց հրապարակման հետևանքով մասնակիցներին պատճառված վնասի համար՝ բացառությամբ Օրենքով նախատեսված՝ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների.

7) արտահերթ նիստը հրավիրում է քարտուղարը՝ պատվիրատուի ղեկավարի գրավոր հանձնարարությամբ կամ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով՝ նրանց նշած ժամկետում և օրակարգով: Արտահերթ նիստ հրավիրելու, դրա օրակարգի և ժամկետի մասին քարտուղարը նիստից առնվազն քսանչորս ժամ առաջ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տեղյակ է պահում հանձնաժողովի անդամներին.

8) անդամի կամ քարտուղարի կողմից իր պարտականությունների չկատարումը, ինչպես նաև հանձնաժողովի անդամ չհանդիսացող պաշտոնատար անձի՝ հանձնաժողովի գործունեությանը միջամտությունը հանգեցնում են այդ անդամին (պաշտոնատար անձին) Արցախի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու նպատակով միջոցների ձեռնարկմանը.

9) անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար.

10) յուրաքանչյուր անդամ գնահատում է ներկայացված հայտերը, ներառյալ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, դրանց գնահատման արդյունքներն արտացոլում է գնահատման թերթիկներում և իր ստորագրությամբ հաստատում է դրանք: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին և գրավոր եզրակացություն է տալիս հայտով առաջարկվող ապրանքի համարժեքության վերաբերյալ, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

29. Եթե գնահատող հանձնաժողովը չի ապահովում գնումների մասին Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը, ապա քարտուղարը դրա մասին հայտնի դառնալու օրը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, ով՝

1) զեկուցագիրը ստանալու օրը՝

ա. հրամանով կասեցնում է հանձնաժողովի գործունեությունը: Եթե կասեցման հրամանով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա հանձնաժողովի գործունեությունը կասեցվում է մինչև երեք աշխատանքային օրով,

բ. հանձնարարում է պատվիրատուի իրավաբանական ծառայությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր.

2) իրավաբանական ծառայության գրավոր առաջարկի հիման վրա հարցի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով կարող է դիմել իրավասու (մասնագիտացված) մարմինների: Նման դեպքում հանձնաժողովի

գործունեության կասեցման ժամկետը երկարացվում է մինչև եզրակացություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ինչի կապակցությամբ պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունվում է հրաման:

3) իրավական եզրակացությունն ստանալուց հետո հրամանով՝

ա. հանձնաժողովի գործունեությունը վերականգնվում է, եթե իրավական եզրակացությամբ զեկուցագիրը համարվել է անհիմն, կամ՝

բ. հանձնարարվում է գնահատող հանձնաժողովին, ըստ իրավական եզրակացության, վերանայել հանձնաժողովի որոշումները: Ձեկուցագիրը և իրավական եզրակացությունը կցվում են արձանագրությանը:

30. Մինչև սույն կարգի համաձայն պատվիրատուի ղեկավարի հրամանով սահմանված, հանձնաժողովի գործունեության կասեցման ժամկետի ավարտը նոր հրաման չլինելու դեպքում հանձնաժողովի գործունեությունը համարվում է վերականգնված: Հանձնաժողովի գործունեությունը կասեցնելու հետ կապված փաստաթղթերի պատճենները կցվում են գնման ընթացակարգի արձանագրությանը:

31. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ պայմանագիրը կնքվելու օրվան հաջորդող օրը հանձնաժողովը համարվում է լուծարված:

32. Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում, եթե գնահատող հանձնաժողով չի ձևավորվում, ապա գնահատող հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը, մասնագիտական խումբ ձևավորված լինելու դեպքում՝ խումբը, իսկ հանձնաժողովի քարտուղարինը՝ գնումները համակարգողը:

VII. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

33. Գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է՝

1) գնումների կամ նախատրակավորման հայտարարության տեքստը,

2) հրավերի տեքստը,

3) հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

34. Հրավերով նախատեսվում է, որ՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

դ. հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում,

ե. հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը,

զ. պետական գրանցման վկայականի պատճենը,

է. ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

2) մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ միավորի համար արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի

բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Եթե մասնակիցը տվյալ գործունեության տեսակի գծով Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

3) շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը չի ներկայացնում իր կողմից կազմված նախահաշիվը, իսկ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում կնքվող պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՎԳ- նախահաշիվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած գինն է:

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է:

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ:

4) պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի կողմից ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը պարունակող փաստաթղթի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:

5) նշում կանխավճարի հատկացման և դրա առավելագույն չափի մասին՝ պայմանով, որ ընտրված մասնակիցը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում, կանխավճարի չափը չի կարող գերազանցել ընտրված մասնակցի առաջարկած գնի 25 տոկոսը, բացառությամբ՝ պետական գաղտնիք պարունակող՝ ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման դեպքերի:

6) կնքվելիք պայմանագրերը կարող են իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով: Գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը: Եթե գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները):

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

գ. պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ: Պատվիրատուն իր համաձայնությունը տալու համար իրավունք ունի մասնակցից պահանջելու նոր գործակալի կամ ենթակապալառուի վերաբերյալ փաստաթղթեր՝ վերջինիս համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը ճշտելու նպատակով: Պատվիրատուի անհամաձայնության դեպքում վերջինս երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է մասնակցին և գործակալի կամ ենթակապալառուի փոփոխություն չի կատարվում, կամ պայմանագիրը լուծվում է:

Գործակալության կամ ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով պայմանագրերն իրականացնելու դեպքում մասնակիցն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների համար.

7) մասնակիցը կարող է գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

ա. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը,

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին,

գ. հրավերով սահմանվում է, որ համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ: Սույն պահանջի չպահպանման դեպքում հայտերի բացման նիստում մեծվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

8) եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով.

9) պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի հինգ տոկոսը.

10) էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Ընդ որում, տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

11) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագիծում ներառվում են ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

12) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Ընդ որում, պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

13) գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների: Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում՝

ա. մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավելի չափաբաժինների համար, ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ՝ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի (միավորի գնի և քանակի արտադրյալ) նկատմամբ,

բ. մասնակիցն ընտրված է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով, ապա կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ՝ մեկ պայմանագրի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Սեկ պայմանագրի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ:

գ. մասնակիցը հրաժարվում է որևէ չափաբաժնից կամ պայմանագիր կնքելուց, կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, ապա հայտի ապահովումը վճարվում է միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված ապահովման չափով:

դ. կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա պայմանագրի ապահովումը վճարվում է միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

14) հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությամբ:

35. Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝

1) պայմանագրի կողմը պատասխանատվություն է կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխման դեպքում պայմանագրի կողմը գրավոր տեղեկացնում է պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3) համատեղ գործունեության (կոնսորցիում) դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

4) պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը պայմանագրով սահմանված ժամկետներում չկատարելու համար: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ: Եթե՝

ա. պայմանագիրը կնքվել է օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով կնքված այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակներում արձանագրվել է ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

բ. գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով և ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժիններ, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

5) գնումների դիմաց վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պատվիրատուն պարտավոր է ապահովել պայմանագրի կողմի նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ:

6) եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները.

7) նախագծային փաստաթղթեր չպահանջող շինարարական ծրագրերի գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից աշխատանքը ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա պայմանագրի կողմը պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները.

8) այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Արցախի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով.

9) պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միննույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ.

10) նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմում են Օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ. ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ. ներկայացնում է շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

դ. պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

ե. ներկայացնում է ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը.

11) շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի հինգ տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին.

12) եթե պայմանագիրը կնքվելու է ընդհանուր արժեքով, սակայն տվյալ տարում նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է, և ապրանքների մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայությունների մատուցման որոշակի մասը կատարվելու է հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում, պայմանագրում նախատեսվում է, որ հաջորդող տարիներին ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում է համաձայնագիր կնքելու միջոցով: Այն դեպքում, երբ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում չեն նախատեսվում միջոցներ, ապա այդ մասով պայմանագիրը լուծվում է.

13) շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրով նախատեսվում են կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները և սահմանվում է, որ եթե այդ ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով.

14) պայմանագրի կատարման ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

36. Գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը՝

1) գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը, իսկ շինարարական ծրագրերի գնման դեպքում նաև նախահաշիվը, ներառյալ ըստ առանձին աշխատանքների տեսակների կատարման արժեքները, Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է գնումների էլեկտրոնային տեղեկատուում.

2) հրավերը, էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկում է նաև Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, եթե գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով.

3) հրավերն էլեկտրոնային եղանակով ուղարկում է տվյալ գնման ընթացակարգի հնարավոր մասնակցին (մասնակիցներին), եթե գնումը կատարվում է Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով.

4) Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ձեռնարկում է միջոցներ՝ պայմանագիր կնքելու համար, եթե գնումը կատարվում է բորսաներից:

37. Գնահատող հանձնաժողովի որոշմամբ քարտուղարը ձեռնարկում է լրացուցիչ միջոցներ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման նպատակով՝ գնման գործընթացի վերաբերյալ տեղեկությունները՝

1) գնումների կամ նախարակալորման հայտարարությունը հրապարակում է նաև զանգվածային լրատվության, այդ թվում՝ էլեկտրոնային այլ միջոցներով:

2) հրավերը տրամադրում (ուղարկում) է գնահատող հանձնաժողովի կողմից որոշված գնման գործընթացի հնարավոր մասնակիցներին:

38. Փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին ներկայացվում է գրավոր դիմում: Փաստաթղթային ձևով հրավեր ստանալու մասին դիմումի հետ միասին ներկայացվում է նաև հրավեր տրամադրելու համար պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը, եթե գնումների մասին հայտարարությամբ փաստաթղթային ձևով հրավերի տրամադրման համար նախատեսված է վճար: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը: Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

39. Ռուսերենով կամ անգլերենով հրավեր ստանալու համար պատվիրատուին ներկայացվում է գրավոր դիմում և ռուսերենով կամ անգլերենով հրավեր տրամադրելու համար պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը: Ռուսերենով կամ անգլերենով հրավեր տրամադրելու համար գանձվող գումարի չափը սահմանվում է գնումների հայտարարությամբ, որը չի կարող գերազանցել հրավերի թարգմանության, տպագրման և առաքման համար կատարվող ծախսերի չափը: Այդ դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի տրամադրումն այդպիսի պահանջ ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Պատվիրատուի կողմից ռուսերենով կամ անգլերենով տրամադրված հրավերն ունի նույն իրավական ուժը, ինչ որ հայերեն հրավերը: Ռուսերենով կամ անգլերենով հրավերի և հայերեն հրավերի տարբերության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

40. Հրավերի պատճենահանման, թարգմանության և առաքման հետ կապված ծառայությունների մատուցման նպատակով պատվիրատուն կնքում է ծառայությունների մատուցման պայմանագիր, եթե այդ աշխատանքները չեն կատարվում պատվիրատուի ռեսուրսների հաշվին:

41. Մինչև հայտերի բացման նիստը պատվիրատուի պաշտոնատար անձանց արգելվում է հրավեր տրամադրելու պահանջ ներկայացրած կամ հրավեր ստացած անձանց մասին տեղեկություններ հաղորդելն այլ անձանց: Այդ պաշտոնատար անձանց կողմից այլ անձանց՝ գնումների մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ չնախատեսված ձևով պարզաբանումներ կամ գնման ընթացակարգին վերաբերող այլ տեղեկություններ տրամադրելը հանգեցնում է այդ անձին օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու նպատակով միջոցների ձեռնարկմանը:

42. Բացառությամբ էլեկտրոնային եղանակով կատարվող գնումների, գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ դրանց ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով դրա մասին տրվում է տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը

գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

43. Հայտերի բացման նիստում՝

1) նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը: Ընդ որում, թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում, իսկ ավելացված արժեքի հարկը օրենքով սահմանված դրույքաչափից բարձր լինելու դեպքում ընդունվում է օրենքով սահմանված դրույքաչափը: Թվաբանական սխալների և ավելացված արժեքի հարկի դրույքաչափի ուղղումներ կատարելու դեպքում տեղեկացվում է տվյալ մասնակցին:

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված՝ նվազագույն գին առաջարկված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են նվազագույն գին առաջարկված բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություններ ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված՝ նվազագույն գին առաջարկված բոլոր մասնակիցներին գրավոր կամ էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը՝ ծանուցմամբ նշված ժամկետում, անկախ բոլոր մասնակիցների ներկայության փաստից,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար և մինչև բանակացությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար հատկացված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

44. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը երկու աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին թղթային կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ընդ որում, անհամապատասխանությունների շտկման շրջանակներում չի կարող փոխվել մասնակցի տառերով ներկայացրած գնային առաջարկը:

Գնային առաջարկի բացակայություն է համարվում նաև այն դեպքերը, երբ.

ա. գնային առաջարկում բացակայում է տառերով գրված գումարը, կամ

բ. տառերով գրվածը հնարավոր չէ ընդունել որպես գումար:

45. Եթե սույն կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

46. Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) թղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետի «է» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

2) էլեկտրոնային փոստի միջոցով Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության հարկային մարմին (այսուհետ՝ հարկային մարմին) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և տվյալ գործունեության տեսակի գծով ավելացված արժեքի հարկ վճարելու վերաբերյալ (եթե վերջինս գնային առաջարկում առանձնացված տողով այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումար է նշել, բացառությամբ աշխատանքների և ծառայությունների), ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Հարկային մարմինն սույն կետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում հարկային մարմնից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

47. Եթե Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում ընտրված մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, ապա հանձնաժողովը մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները) ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

48. Սույն կարգի 46-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարը հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները և գնահատման թերթիկների երկուական օրինակ: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանությունն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

49. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացնելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ՝ ներառյալ հարկային մարմնի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետի «է» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը թղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երկու աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է հարկային մարմնից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

50. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

51. Հայտերի գնահատումը, համեմատումը, մերժումը և հաղթողի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

52. Եթե մասնակիցը հայտարարվել է ընտրված մասնակից գնման առարկայի մեկից ավելի չափաբաժինների համար, սակայն հրաժարվում է որևէ չափաբաժնի (չափաբաժինների) համար պայմանագիր կնքելուց, ապա տվյալ մասնակցի հետ մնացած չափաբաժինների մասով պայմանագիրը կնքվում է՝ հրաժարված չափաբաժինների մասով համամասնորեն հաշվարկված հայտի ապահովում վճարելու դեպքում:

53. Ընտրված մասնակցի հետ, այդ թվում՝ սահմանափակ ընթացակարգի կիրառման դեպքում, պայմանագիրը կնքվում է Օրենքի 9-րդ և 33-րդ հոդվածներով նախատեսված կարգով: Ընդ որում.

1) տվյալ պայմանագրի գծով վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը պայմանագրում ներառվում է համաձայն ընտրված մասնակցի գնային առաջարկում նշված՝ ավելացված արժեքի հարկի մեծության.

2) ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում են համաձայն ընտրված մասնակցի կողմից սույն կարգի 46-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ներկայացրած առաջարկի:

54. Պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում, ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև մեկ տարվա ընթացքում: Եթե հրավերում և պայմանագրում նշված չէ, որ պայմանագրի գինը գործոնային է, ապա պայմանագրի գինը համարվում է կայուն՝ անկախ պայմանագրի կատարման ժամկետից:

55. Եթե պայմանագրի գինը կայուն է, ապա՝

1) մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր.

2) մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել.

3) պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (ընտրված մասնակցի կամ պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

4) պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում պայմանագրի ստորագրած մասնակցի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագրի կնքած անձը:

56. Պայմանագրի գինը կարող է լինել գործոնային, և այդ պայմանը պետք է նախատեսված լինի հրավերով ու պայմանագրով, եթե՝

1) պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարվում, ծառայությունները մատուցվում և աշխատանքները կատարվում են պայմանագրի կնքման օրվանից հաշված մեկ տարին գերազանցող ժամանակահատվածում՝ միայն մեկ տարին գերազանցող ժամանակահատվածի համար պայմանագրով նախատեսված գների փոփոխության հնարավորությամբ.

2) Արցախի Հանրապետության կառավարության սահմանած այլ դեպքերում:

57. Եթե պայմանագրի գինը գործոնային է, հրավերով նախատեսվում են՝

1) բոլոր այն պայմանները (այսուհետ՝ արտաքին գործոններ), որոնց փոփոխությամբ պայմանագրի գինը կարող է փոփոխվել.

2) արտաքին գործոնների փոփոխությամբ պայմանագրի գնի փոփոխման կարգը:

58. Եթե պետության կարիքների համար կնքված պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա այդ պայմանագրում կատարված փոփոխությունը և դրա մասին հայտարարությունը պատվիրատուն Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է գնումների էլեկտրոնային տեղեկատուում՝ այդ փոփոխությունը կատարելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում, իսկ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների դեպքում այդ փոփոխությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է լիազոր մարմնին:

59. Արգելվում է պայմանագրում, ինչպես նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Արհեստական են համարվում հետևյալ փոփոխությունները՝

1) պայմանագրի գնի անփոփոխ մնալու պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների նվազեցումը կամ պայմանագրի գնի նվազեցման պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների ոչ համամասնորեն նվազեցումը, որի արդյունքում ավելանում է գնման առարկայի միավորի ձեռքբերման գինը:

2) բացառությամբ կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված ցանկում ներառված գնումների՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ծավալների ավելացումը, որը գերազանցում է պայմանագրի գնի քսան տոկոսը: Պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ծավալները կարող են ավելանալ միայն պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետում:

3) պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների փոխարինումն այլ բնութագրեր ունեցող ապրանքներով, աշխատանքներով կամ ծառայություններով, որոնք միասին գումարային արտահայտությամբ գերազանցում են պայմանագրի գնի քսան տոկոսը: Պայմանագրի գնի քսան տոկոսի շրջանակում փոխարինումը կարող է կատարվել, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունն այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է պայմանագրի արդյունավետ իրականացմանը:

4) բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գնումների դեպքերի՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ժամկետը մեկ անգամից ավելի մինչև երեսուն օրացուցային օրից ավելի ժամկետով երկարաձգելը: Ընդ որում, ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը, իսկ առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ:

5) Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով կնքված պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ժամկետի երկարաձգումը:

6) պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի կամ նախագծային առաջադրանքների անփոփոխ մնալու պայմաններում պայմանագրի գնի ավելացումը:

60. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

61. Եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում, և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ:

**VIII. ԳՆՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

62. Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին.

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից, այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

63. Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե հրավերով «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները

Նախկինում կատարված պայմանագրերի		
առարկան	ծավալը՝ գումարային արտահայտությամբ (ՀՀ դրամ)	պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները
1	2	3
Տարեթիվը՝ թվական		
1.		
2.		
..		
Տարեթիվը՝ թվական		
1.		
2.		
..		
Տարեթիվը՝ թվական		
1.		
2.		
..		

2) մասնակիցը համարվում է Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջը բավարարող, եթե հայտով ներկայացրել է պահանջվող տեղեկությունները:

64. Մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե հրավերով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային

ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (համաձայնագրի) պատճենները, նախկինում կատարած գործարքների հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի (համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) կամ ձեռքբերումը հավաստող փաստաթղթի պատճենը կամ տվյալ պայմանագրի կամ գործարքի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

65. Մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

66. Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված է համապատասխան պահանջ, ապա Արցախի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

2) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջը:

67. Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին՝ նշելով աշխատակիցների թվաքանակը, որոնց միջոցով մասնակիցը պետք է ապահովի պայմանագրի կատարումը.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան որակավորում ունեցող աշխատակիցներ ունենալու պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		Գործատուի անվանումը
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

68. Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

69. Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

70. Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) տվյալ մասնակցի հայտը մերժվում է.

2) մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

IX. ՆԱԽԱՌԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

71. Պատվիրատուն կազմակերպում է նախաորակավորման ընթացակարգ, եթե գնումը կատարվում է՝

1) մրցակցային երկխոսության ընթացակարգով.

2) սահմանափակ ընթացակարգով.

3) Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիման վրա բանակցային ընթացակարգով.

4) Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հիման վրա՝ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում.

5) խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով կազմակերպվող բաց կամ սահմանափակ ընթացակարգերով.

6) շրջանակային համաձայնագրերով, եթե գնման գործընթացը պարունակում է պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք:

72. Նախաորակավորման ընթացակարգը կազմակերպվում է Օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված պայմաններով և դրանց կիրարկման հետևյալ կարգով՝

1) նախաորակավորման հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը սահմանվում է առնվազն յոթ օրացուցային օր, որը հաշվարկվում է նախաորակավորման հայտարարության հրապարակման պահից.

2) նախաորակավորման հայտարարությամբ սահմանվում է պայմանագրի կատարման համար պահանջվող լիցենզիան և մասնակցի որակավորմանը ներկայացվող՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները՝ բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող շրջանակային համաձայնագրերով գնումների կատարման դեպքի.

3) սահմանափակ ընթացակարգով կամ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող շրջանակային համաձայնագրերով գնումների կատարման դեպքում նախատեսվում են նախաորակավորված մասնակցին հրավերի տրամադրման համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանները.

4) մասնակիցը հայտը ներկայացնում է նախաորակավորման հայտարարությամբ սահմանված կարգով: Նախաորակավորման հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

ա. նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում,

բ. մասնակցի կողմից հաստատված գրավոր հայտարարություն՝ նախաորակավորման հայտարարությամբ սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշի մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին՝ հայտարարությանը կցելով սույն կարգի համաձայն պահանջվող տեղեկությունները,

գ. հայտարարությամբ նախատեսված լիցենզիայի պատճենը,

դ. համատեղ գործունեության պայմանագիր, եթե մասնակիցները նախաորակավորման ընթացակարգին մասնակցում են կոնսորցիումով.

5) նախաորակավորման հայտը կարող է ներկայացվել էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հասցեագրված էլեկտրոնային գրությամբ.

6) մասնակցի նախաորակավորման հայտը գնահատվում է նախաորակավորման հայտարարությամբ սահմանված կարգով.

7) գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունք են ստանում նախաորակավորված մասնակիցների ցուցակում ընդգրկված մասնակիցները, որոնց Օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված նախաորակավորման ընթացակարգի արդյունքների մասին կազմված արձանագրության հետ միասին էլեկտրոնային կամ փաստաթղթային ձևով տրամադրվում է նաև հրավերը:

X. ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

73. Եթե կազմակերպվում է բանակցային ընթացակարգ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու, ապա՝

1) նախաորակավորման ընթացակարգ չի կազմակերպվում.

2) մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որակավորումը գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. եթե մասնակիցը, հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցը համարվում է որակավորված,

բ. հայտարարությունից բացի, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով այլ փաստաթղթեր մասնակցից կարող են չպահանջվել.

3) գնման առարկայի բնութագրերը պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակելու դեպքում՝ մասնակիցը պետք է բավարարի պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հետ առնչվելու իրավունք ունեցող անձանց Արցախի Հանրապետության օրենսդրությամբ ներկայացվող պահանջները.

4) մասնակիցը՝

ա. հայտի ապահովում չի ներկայացնում,

բ. պայմանագրի և (կամ) կանխավճարի ապահովում ներկայացնում է, եթե գնումը կատարվում է Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի հիման վրա, ընդ որում, գնումն Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի հիման վրա կատարվելու դեպքում պայմանագրի և (կամ) կանխավճարի ապահովում կարող է չներկայացվել, եթե գնումն իրականացվում է կարգի 24-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դեպքում.

5) մասնակցի հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում,

բ. գրավոր հայտարարություն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին,

գ. գնման առարկայի բնութագրերը պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակելու դեպքում, հրավերով նախատեսված՝ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հետ առնչվելու իրավունքը հիմնավորող փաստաթղթերը (տեղեկությունները),

դ. համատեղ գործունեության պայմանագիր, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են կոնսորցիումով,

ե. գնային առաջարկ.

6) հայտը գնումների համակարգողին է ներկայացվում հրավերով սահմանված կարգով՝ մասնակցի կողմից հաստատված գրությամբ: Հայտը կարող է ներկայացվել էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հասցեագրված էլեկտրոնային գրությամբ.

7) գնումների համակարգողը, գնահատող հանձնաժողովի որոշմամբ, հրավերին համապատասխանող գնահատված հայտ ներկայացրած մասնակցին հրավիրում է բանակցությունների: Բանակցությունները կարող են հանգեցնել մասնակցի հայտի փոփոխմանը, սակայն ոչ հայտով ներկայացված գնի ավելացմանը կամ հրավերի պայմանների փոփոխությանը: Բանակցությունների արդյունքները հաստատվում են գնահատող հանձնաժողովի որոշմամբ և այդ որոշման հիման վրա կնքվում է պայմանագիր.

8) պատվիրատուն սույն կարգի 24-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով նախատեսված հիմքերով գնում կատարելու դեպքում պետք է ներկայացնի առնվազն երեք հնարավոր մասնակցի գնային առաջարկները:

74. Սույն կարգի 73-րդ կետով նախատեսված պայմանները պարտադիր չեն, եթե գնումը կատարվում է Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

75. Գնումն Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 6-րդ կետերի հիման վրա կատարվելու դեպքում, եթե գնումը չի կատարվում շրջանակային համաձայնագրերի հիման վրա և գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը, ապա՝

1) գրավոր պայմանագրի կնքումը պարտադիր չէ, և գործարքը կարող է կատարվել Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագիր և այլն) հիման վրա.

2) գնումների համակարգողը, Արցախի Հանրապետության օրենսդրությանը չհակասող եղանակով, ապահովում է պայմանագրի կնքումը:

76. Եթե կազմակերպվում է բանակցային ընթացակարգ գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով, ապա՝

1) սույն կարգի համաձայն կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ.

2) նախաորակավորված մասնակիցների ցուցակի հաստատման օրվանից երեք օրացուցային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային կամ փաստաթղթային ձևով նախաորակավորված բոլոր մասնակիցներին նախաորակավորման ընթացակարգի արդյունքների մասին կազմված արձանագրության հետ միասին միաժամանակ տրամադրում (ուղակում) է նաև հրավեր:

77. Աշխատանքների նախագծման, հետազոտական, փորձաքննության, փորձարարական կամ գիտական նպատակներով ոչ նյութական առանձին ակտիվների ձեռքբերման նպատակով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ կազմակերպվելու դեպքում՝

1) հրավերով գնման առարկայի հատկանիշները սահմանվում են որպես կատարողականի և (կամ) գործառնության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան.

2) հայտերը ներկայացվում են երկու փուլով.

3) առաջին փուլի հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի յոթ օրացուցային օրից, որը հաշվարկվում է հրավերի տրամադրման օրվանից.

4) առաջին փուլի հայտը, որը չի պարունակում գնային առաջարկ, կարող է ներառել մասնակցի առաջարկները հրավերով ներկայացված գնման առարկայի կատարողականի և (կամ) գործառնության (ֆունկցիոնալ) նկարագրերի վերաբերյալ՝ ոչ գնային (տեխնիկական) առաջարկը: Մասնակիցը, իր տեխնիկական առաջարկի հիմնավորման նպատակով, առաջին փուլի հայտով, կարող է ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր, տեղեկություններ, եզրակացություններ և այլ նյութեր.

5) մասնակիցը տեխնիկական առաջարկը ներկայացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարին հասցեագրված գրությամբ՝ մինչև առաջին փուլի հայտերի ներկայացման համար հրավերով նախատեսված ժամկետի ավարտը: Մասնակիցը տեխնիկական առաջարկը կարող է ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հասցեագրված էլեկտրոնային գրությամբ.

6) տեխնիկական առաջարկի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հայտերի պատճենները փոխանցում է պատասխանատու ստորաբաժանմանը.

7) ոչ ուշ, քան տեխնիկական առաջարկները ներկայացվելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը նախաորակավորված բոլոր մասնակիցներին հրավիրում է միաժամանակյա բանակցությունների: Բանակցություններ կազմակերպվելու մասին ծանուցումը գնահատող հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ուղարկում է գրավոր կամ

Էլեկտրոնային եղանակով՝ նշելով բանակցությունների անցկացման վայրը, օրը և ժամը՝ ոչ ուշ, քան բանակցությունների անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ: Բանակցություններին, խորհրդատուի կարգավիճակով, կարող են հրավիրվել նաև այլ անձինք: Տեխնիկական առաջարկ ներկայացրած մասնակցի հետ առանձին բանակցություններն արգելվում են: Բանակցությունների արդյունքում կազմվում է գրավոր արձանագրություն, որը ստորագրում են բանակցությունների մասնակիցները: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության մասն է.

8) բանակցությունների արդյունքում պատասխանատու ստորաբաժանումը հաստատում և հաստատման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարին է տրամադրում գնման վերանայված հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը, որոնք պետք է համապատասխանեն Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերին,

բ. մասնակիցների որակավորման չափանիշները,

գ. գնման առարկա հանդիսացող ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար պահանջվող լիցենզիաների ցանկը, եթե կնքվելիք պայմանագրի կատարումը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ համարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն,

դ. գնման առարկայի բնութագրերը պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակելու դեպքում, մասնակիցներին ներկայացվող՝ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հետ առնչվելու իրավունք ունեցող անձանց համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջների սպառիչ թվարկումը, դրանց հիմնավորման համար պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև դրանց գնահատման կարգը.

9) գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝

ա. սույն կարգի համաձայն գնահատում և ապահովում է գնման վերանայված հայտի համապատասխանությունը գնումների մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին,

բ. երկրորդ փուլի հրավերը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գնման հայտը՝ կից գրությամբ, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով, միաժամանակ ուղարկում է նախաորակավորված բոլոր մասնակիցներին և առաջարկում ներկայացնել երկրորդ փուլի հայտ.

10) երկրորդ փուլի հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի յոթ օրացուցային օրից, որը հաշվարկվում է երկրորդ փուլի հրավերը նախաորակավորված մասնակիցներին ուղարկվելու օրվանից.

11) երկրորդ փուլի հայտը ներկայացվում է Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն կազմված ծրարով.

12) երկրորդ փուլի հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

ա. գնային առաջարկ՝ մեկ բնօրինակ,

բ. որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ,

գ. հայտի ապահովում՝ մեկ բնօրինակ,

դ. գնման առարկայի բնութագրերը պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակելու դեպքում, երկրորդ փուլի հրավերը նախատեսված՝ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հետ առնչվելու իրավունքը հիմնավորող փաստաթղթերը (տեղեկությունները).

13) երկրորդ փուլի հայտերը բացվում են Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն.

14) հայտերի գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովի կողմից որոշվում են բավարար գնահատված մասնակիցները: Բավարար են գնահատվում

հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են.

15) ընտրված մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ Օրենքի 9-րդ և 33-րդ հոդվածների համաձայն՝ կնքվում է պայմանագիր:

78. Արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ կազմակերպվելու դեպքում՝

1) նախաորակավորման հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը սահմանվում է հինգ օրացուցային օր, որը հաշվարկվում է նախաորակավորման հայտարարության հրապարակման պահից.

2) հրավերը կազմվում է Օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ հաշվի առնելով, որ՝

ա. գնման առարկայի բնութագրերը պետք է համապատասխանեն Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի պահանջներին.

բ. մասնակիցը պետք է բավարարի Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նախատեսված՝ սույն կարգով ներկայացված պահանջներին.

3) հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի հինգ օրացուցային օրից, որը հաշվարկվում է հրավերը նախաորակավորված մասնակիցներին ուղարկվելու օրվանից.

4) հայտերը ներկայացվում են Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն կազմված ծրարով.

5) հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

ա. գնային առաջարկ՝ մեկ բնօրինակ.

բ. որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ.

գ. հայտի ապահովում՝ մեկ բնօրինակ.

դ. գնման առարկայի բնութագրերը պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակելու դեպքում, գնման վերանայված հայտով նախատեսված՝ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հետ առնչվելու իրավունքը հիմնավորող փաստաթղթերը (տեղեկությունները).

6) հայտերը բացվում են Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն.

7) հայտերի գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովի կողմից որոշվում են բավարար գնահատված մասնակիցները: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են.

8) հայտերի գնահատման արդյունքները հրապարակվում են գնահատող հանձնաժողովի նիստում, որի ընթացքում, ընտրված մասնակցին (մասնակիցներին) որոշելու համար բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ՝ գնային առաջարկների նվազեցման նպատակով.

9) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստ կազմակերպելու մասին ծանուցումը, գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկում է գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ նշելով նիստի անցկացման վայրը, օրը և ժամը՝ ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում.

10) միաժամանակյա բանակցություններում ներգրավվում են միայն բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները: Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակցի հետ առանձին բանակցություններն արգելվում են.

11) բանակցություններում ներգրավված յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնի առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը: Բանակցությունների վարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը համարվում է ընտրված մասնակից, որի հետ Օրենքի 9-րդ և 33-րդ հոդվածների համաձայն՝ կնքվում է պայմանագիր:

XI. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

79. Գնման առարկան Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառվելու՝

1) օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը Գնումների աջակցման կենտրոնին է տրամադրում տվյալ շրջանակային համաձայնագիրը կնքելու նպատակով մասնակիցներին ներկայացվող մասնակցության իրավունքի և որակավորման հատկանիշների գնահատման չափանիշները, դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը:

2) օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում օրենքով նախատեսված Գնումների աջակցման կենտրոնի ղեկավարը՝

ա. հաստատում է գնումների հայտարարության և հրավերի տեքստերը,

բ. նշանակում է տվյալ գնման գործընթացի քարտուղար,

գ. գնումների հայտարարության և հրավերի տեքստերը ուղարկում է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

80. Հրավերը գնման բնութագրեր չի ներառում, և գնման առարկան հրավերում նկարագրվում է ըստ դրա՝ Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում նշված սահմանման:

81. Գնումների հայտարարության և հրավերի տեքստերը ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դրանք տեղադրում է՝ հրապարակում է ինտերնետային կայքում՝ միաժամանակ ապահովելով գնումների հայտարարության վերաբերյալ հեռուստատեսությամբ հիմնական տեղեկությունների հեռարձակումը:

82. Քարտուղարը՝

1) ապահովում է գնումների հայտարարության հրապարակումը առնվազն հինգ հարյուր տպաքանակ ունեցող տպագիր մամուլում՝

ա. ինտերնետային կայքում տվյալ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում,

բ. յուրաքանչյուր ամսվա տասներորդ աշխատանքային օրվա ընթացքում:

2) կարող է ձեռնարկել լրացուցիչ միջոցներ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման նպատակով՝ գնման գործընթացի վերաբերյալ տեղեկությունները (գնումների հայտարարությունը)՝

ա. հրապարակել նաև զանգվածային լրատվության, այդ թվում՝ էլեկտրոնային այլ միջոցներով,

բ. սեփական նախաձեռնությամբ տրամադրել (ուղարկել) գնման գործընթացի հնարավոր մասնակիցներին:

83. Գնումների հայտարարության և հրավերի հրապարակումից հետո, գնման գործընթացին մասնակցելու ցանկություն ունեցող անձը, որպես հնարավոր մասնակից գրանցվելու նպատակով, Գնումների աջակցման կենտրոն է ներկայացնում գրանցման հայտ, որը ներառում է՝

1) գրավոր դիմում՝ հասցեագրված Գնումների աջակցման կենտրոնի ղեկավարին.

2) մասնակցի կողմից հաստատված գրավոր հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

3) հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր.

4) հայտի ապահովում՝ տուժանքի ձևով, որի չափը պետք է կազմի գնումների բազային միավորի մեկ քառորդը:

84. Գրանցման հայտը գնահատում է քարտուղարը՝ հրավերով սահմանված կարգով:

85. Գրանցման հայտը Գնումների աջակցման կենտրոն մուտքագրվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, հրավերով սահմանված չափանիշներին՝

1) համապատասխանող մասնակցի հետ Գնումների աջակցման կենտրոնը կնքում է շրջանակային համաձայնագիր և մասնակիցը գրանցվում է շրջանակային համաձայնագրեր կնքած անձանց ցուցակում: Մասնակիցը Գնումների աջակցման կենտրոնին է տրամադրում էլեկտրոնային փոստի հասցե, որի միջոցով պետք է ապահովվի շրջանակային համաձայնագրով նախատեսված տեղեկությունների շրջանառումը.

2) չհամապատասխանող մասնակցի գրանցումը մերժվում է, որի մասին Գնումների աջակցման կենտրոնը ծանուցում է գրանցման հայտ ներկայացրած մասնակցին՝ սպառիչ ձևով նշելով մերժման համար հիմք հանդիսացած բոլոր անհամապատասխանությունները:

86. Մերժման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունները շտկելու մտադրության դեպքում, մասնակիցը գրանցման հայտ է ներկայացնում Գնումների աջակցման կենտրոն՝ սկզբնական գրանցումը մերժելու ծանուցման օրվան հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում: Կրկին ներկայացված գրանցման հայտը քարտուղարի կողմից գնահատվում է՝ դրանք ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝

1) կարող են ներկայացվել միայն այն փաստաթղթերը, որոնցում առկա են եղել անհամապատասխանություններ.

2) մասնակիցը ներկայացնում է հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի ու հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանության և գրանցումը մերժելու պահից հետո դրանց անփոփոխ մնալու մասին:

87. Կրկին ներկայացված գրանցման հայտը հրավերի պահանջներին՝

1) համապատասխանող գնահատվելու դեպքում, երկու աշխատանքային օրվա ընթացքում տվյալ մասնակցի հետ կնքում է շրջանակային համաձայնագիր և մասնակիցը գրանցվում է շրջանակային համաձայնագրեր կնքած անձանց ցուցակում.

2) չհամապատասխանող գնահատվելու դեպքում մասնակցի գրանցումը մերժվում է, որի մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում Գնումների աջակցման կենտրոնը ծանուցում է գրանցման դիմում ներկայացրած մասնակցին՝ սպառիչ ձևով նշելով մերժման համար հիմք հանդիսացած բոլոր անհամապատասխանությունները:

88. Սահմանված ժամկետում կրկին գրանցման հայտ չներկայացվելու կամ ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում,

տվյալ մասնակցի գրանցման գործընթացը դադարեցվում է: Մասնակիցը կարող է սույն կարգի համաձայն գրանցման նոր հայտ ներկայացնել:

89. Շրջանակային համաձայնագիրը կնքելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Գնումների աջակցման կենտրոնը, էլեկտրոնային եղանակով, Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում շրջանակային համաձայնագիր կնքած մասնակցի վերաբերյալ տվյալները և կնքված շրջանակային համաձայնագրի օրինակը:

90. Շրջանակային համաձայնագիր կնքած մասնակցի տվյալները ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դրանք և կնքված շրջանակային համաձայնագիրը տեղադրում է գնումների էլեկտրոնային տեղեկատուում՝ մասնակցին գրանցելով շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների ցուցակում:

91. Շրջանակային համաձայնագրով նախատեսվում է նաև, որ՝

1) շրջանակային համաձայնագիր կնքած մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

2) հայտը ներկայացվում է ծանուցվելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3) մասնակիցը կարող է դադարեցնել շրջանակային համաձայնագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով Գնումների աջակցման կենտրոնին: Համաձայնագրի դադարեցումը, ավտոմատ կերպով չի դադարեցնում համաձայնագրի հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Շրջանակային համաձայնագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը Գնումների աջակցման կենտրոն մուտքագրվելու օրվան հաջորդող տասներորդ աշխատանքային օրը: Այդ ընթացքում՝

ա. Գնումների աջակցման կենտրոնը գրավոր ծանուցում է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը,

բ. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը մասնակցի վերաբերյալ տվյալները հեռացնում է շրջանակային համաձայնագրեր կնքած անձանց ցուցակից:

4) մասնակիցը պարտավոր է շրջանակային համաձայնագիր կնքելուց հետո:

ա. օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և (կամ) հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր հատկանիշների վատթարացման դեպքում, Գնումների աջակցման կենտրոն ներկայացնել շրջանակային համաձայնագիրը դադարեցնելու մասին դիմում,

բ. յուրաքանչյուր օրացուցային տարին լրանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Գնումների աջակցման կենտրոն ներկայացնել հայտարարություն՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր հատկանիշների անփոփոխ մնալու մասին:

5) սույն կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերության պահանջները չկատարելու դեպքում:

ա. մասնակիցը պարտավոր է Գնումների աջակցման կենտրոնի համապատասխան ծանուցումը ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս վճարել հայտի ապահովման չափով գումար, և՝

բ. մասնակցի հետ կնքված շրջանակային համաձայնագիրը երկու աշխատանքային օրվա ընթացքում լուծվում է:

6) սույն կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները չկատարելու դեպքում մասնակցի հետ կնքված շրջանակային համաձայնագիրը լուծվում է:

Մասնակցի հետ կնքված շրջանակային համաձայնագիրը լուծվում է նաև այն դեպքում, երբ նա ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

92. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու դեպքում՝

1) հրավեր ստացած մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ պահանջելու

հրավերի պարզաբանում: Հարցում կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

2) հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն մեկ աշխատանքային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվա ընթացքում կատարված փոփոխություններն ուղարկվում է հրավեր ստացած մասնակիցներին: Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացվելու վերջնաժամկետը հաշվում է այդ փոփոխությունները մասնակիցներին ուղարկելու օրվանից:

93. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու դեպքում կիրառվում են հետևյալ պայմանները՝

1) հայտը ներառում է շրջանակային համաձայնագիր կնքած անձի կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում,

բ. գնային առաջարկ,

գ. հայտի ապահովում, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող ընդհանուր գնի (միավորի գնի և քանակի արտադրյալ) երկու տոկոսից,

դ. ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

2) հայտը ներկայացվում է փակ՝ ստանձված ծրարով, որի վրա կատարվում են հետևյալ գրառումները՝

ա. «Գնային առաջարկ» բառերը,

բ. ընթացակարգի ծածկագիրը,

գ. «Զբաղեւ մինչև գնային առաջարկների բացման նիստը» բառերը,

դ. մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը,

ե. պատվիրատուի անվանումը (անունը), գտնվելու վայրը:

3) հայտերի բացման նիստում, որը պետք է համընկնի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին, գնումների համակարգողը տեղեկատվություն է հաղորդում հայտերի գրանցամատյանում կատարված գրառումների մասին, որից հետո հանձնաժողովը՝

ա. գնահատում է հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված ծրարները: Անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում գնահատող հանձնաժողովը մերժում է այդ հայտերը: Քարտուղարը նիստին հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում մերժված հայտերը և նիստի արձանագրության պատճենը տրամադրում է մերժված հայտերը ներկայացրած մասնակիցներին,

բ. հրապարակում է բացված հայտերով ներկայացված գները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը: Պահանջի դեպքում հրապարակված գնային առաջարկների պատճենները անհապաղ տրամադրվում են նման պահանջ ներկայացրած մասնակցին:

4) հայտերի բացման նիստում հանձնաժողովի կողմից որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները: Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

5) հայտերի բացման նիստի ավարտից հետո հանձնաժողովի քարտուղարը

կազմում է արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

ա. տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին,

բ. հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեները,

գ. տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին,

դ. տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին,

ե. տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին,

զ. յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը,

է. տեղեկատվություն՝ բանակցությունների վարման մասին,

ը. նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

6) ապրանքների գնման դեպքում, հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը թղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել սույն կարգի 93-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին.

7) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, սահմանված ժամկետում փաստաթղթերը ներկայացնելու դեպքում հանձնաժողովը գնահատում է տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանությունն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները.

8) անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային կամ փաստաթղթային ձևով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը.

9) առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

ա) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից,

բ) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին.

10) սույն կարգի համաձայն և օրենքի 9-րդ և 33-րդ հոդվածներով նախատեսված կարգով ընտրված մասնակցի հետ կնքվում է պայմանագիր: Ընդ որում, ավիասպասարկման ծառայությունների գնման դեպքում անգործության ժամկետ կարող է չսահմանվել, ինչպես նաև բացառությամբ ավիասպասարկման ծառայությունների գնման և այն դեպքերի, երբ պատվիրատուի հետ պայմանագիր կնքող անձը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում, ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և ծառայության մատուցման ժամկետը պետք է սահմանվի առնվազն տասնհինգ աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագիր կնքելու օրվանից.

11) պայմանագրի կնքմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ձեռնարկում է միջոցներ՝ ինտերնետային կայքում Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գնման

պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակելու համար: Եթե գնումը պետության համար առաջացնում է պարտավորություններ, ապա հայտարարությունը միաժամանակ հանդիսանում է օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հաշվետվությունը:

94. Շրջանակային համաձայնագրերի միջոցով պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում գործում են սույն կարգով սահմանված պայմանները, հաշվի առնելով, որ՝

1) գնումների աջակցման կենտրոնի պետի լիազորություններն իրականացնում է պատվիրատուի ղեկավարը.

2) գնումների հայտարարության և հրավերի փոխարեն հաստատվում և հրապարակվում է նախաորակավորման հայտարարություն, որը գործում է անժամկետ.

3) նախաորակավորման հայտարարությամբ սահմանվում են նախաորակավորված մասնակցին հրավերի տրամադրման համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանները:

XII. ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

95. Պարզեցված ընթացակարգով գնում կատարելու դեպքում կիրառվում են սույն կարգի 7-րդ բաժնով սահմանված պայմանները՝ հաշվի առնելով, որ հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի յոթ օրացուցային օրից, որը հաշվարկվում է տեղեկատուում գնումների հայտարարության հրապարակման օրվանից:

XIII. ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

96. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա մրցակցային երկխոսության ընթացակարգ կազմակերպվում է՝ հաշվի առնելով, որ՝

1) կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ.

2) նախաորակավորված մասնակիցների ցուցակի հաստատման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով նախաորակավորված բոլոր մասնակիցներին միաժամանակ տրամադրում (ուղարկում) է հրավեր.

3) հրավերով, գնման առարկայի հատկանիշները սահմանվում են որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրերի նախնական տարբերակը.

4) հայտերը ներկայացվում են երկու փուլով.

5) առաջին փուլի հայտերը ներկայացնելու համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի տասն օրացուցային օրվանից, որը հաշվարկվում է հրավերի տրամադրման օրվանից.

6) առաջին փուլի հայտը, որը չի պարունակում գնային առաջարկ, ներառում է մասնակցի առաջարկները հրավերով ներկայացված գնման առարկայի կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրերի վերաբերյալ առաջարկը (նկարագրերի առաջարկ): Մասնակիցը նկարագրերի առաջարկի հիմնավորման նպատակով առաջին փուլի հայտով կարող է ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր, տեղեկություններ, եզրակացություններ և այլ նյութեր.

7) մասնակիցը, նկարագրերի առաջարկը ներկայացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարին հասցեագրված գրությամբ, մինչև առաջին փուլի հայտերը ներկայացնելու համար հրավերով նախատեսված ժամկետի ավարտը: Մասնակիցը նկարագրերի առաջարկը կարող է ներկայացնել էլեկտրոնային

եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հասցեագրված էլեկտրոնային գրությամբ.

8) նկարագրերի առաջարկը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հայտերի պատճենները փոխանցում է պատասխանատու ստորաբաժանմանը.

9) ոչ ուշ, քան նկարագրերի առաջարկները ներկայացվելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը նախատրակավորված բոլոր մասնակիցներին հրավիրում է միաժամանակյա բանակցությունների: Բանակցություններ կազմակերպելու մասին ծանուցումը գնահատող հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ուղարկում է էլեկտրոնային եղանակով՝ նշելով բանակցությունների անցկացման վայրը, օրը և ժամը՝ ոչ ուշ, քան բանակցությունների անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ: Բանակցություններին, խորհրդատուի կարգավիճակով, կարող են հրավիրվել նաև այլ անձինք: Նկարագրերի առաջարկ ներկայացրած մասնակցի հետ առանձին բանակցություններն արգելվում են: Բանակցությունների արդյունքում կազմվում է գրավոր արձանագրություն, որն ստորագրում են բանակցությունների մասնակիցները: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության մասն է.

10) բանակցությունների արդյունքում պատասխանատու ստորաբաժանումը հաստատում և հաստատման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարին է տրամադրում գնման վերանայված հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի կատարողականի կամ գործառնության (ֆունկցիոնալ) վերջնական նկարագրերը, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան,

բ. մասնակիցների որակավորման չափանիշների գնահատման՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սույն կարգով ներկայացված պահանջները,

գ. գնման առարկա հանդիսացող ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար պահանջվող լիցենզիաների ցանկը, եթե կնքվելիք պայմանագրի կատարումն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ համարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն.

11) գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝

ա. սույն կարգի համաձայն գնահատում և ապահովում է գնման վերանայված հայտի համապատասխանությունը գնումների մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին,

բ. գնման վերանայված հայտն ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում երկրորդ փուլի հրավերը (վերջնական հրավերը)՝ կից գրությամբ, էլեկտրոնային եղանակով, միաժամանակ ուղարկում է նախատրակավորված բոլոր մասնակիցներին և առաջարկում ներկայացնել երկրորդ փուլի հայտ.

12) երկրորդ փուլի հայտերը ներկայացնելու համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի տասն օրացուցային օրվանից, որը հաշվարկվում է վերջնական հրավերը նախատրակավորված մասնակիցներին ուղարկվելու օրվանից.

13) երկրորդ փուլի հայտը ներկայացվում է Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն կազմված ծրարով: Ընդ որում, գնային առաջարկը, որը պետք է դրվի նշված ծրարում, ներկայացվում է փակ՝ ստանձված ծրարով, որի վրա կատարվում են հետևյալ գրառումները՝

ա. «Գնային առաջարկ» բառերը,

բ. ընթացակարգի ծածկագիրը,

գ. «Չբացել մինչև գնային առաջարկների նիստը» բառերը,

դ. մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը.

- 14) երկրորդ փուլի հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝
 ա. գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմում,
 բ. գնային առաջարկ՝ մեկ բնօրինակ,
 գ. որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ,
 դ. տեխնիկական առաջարկ՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ,
 ե. հայտի ապահովում՝ մեկ բնօրինակ.
- 15) մասնակցի տեխնիկական առաջարկը պետք է հնարավորինս համապատասխանի Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի պահանջներին.
- 16) հայտերը բացվում են Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ հաշվի առնելով, որ՝
 ա. հրավերին համապատասխանող գնային առաջարկներ պարունակող ծրարները չեն բացվում, դրանք դրվում են առանձին ծրարի (տուփի) մեջ, որը ստանձվում և փակվում է,
 բ. տուփի վրա ստորագրում են գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը, որն այն վերցնում է ի պահ և ապահովում է դրա առանձնացված պահպանումը՝ հատուկ պահոցում,
 գ. արգելվում են տուփի կամ դրա մեջ դրված ծրարների բացումը կամ որևէ այլ կերպ մասնակիցների գնային առաջարկների հետ ծանոթանալուն ուղղված գործողությունները.
- 17) հայտերը գնահատվում են հետևյալ չափանիշներով՝

Գնահատման չափանիշը	Նվազագույն միավորը	Առավելագույն միավորը
1	2	3
Մասնագիտական փորձառու- թյուն	Առկա է կամ բացակայում է	
Տեխնիկական միջոցներ		
Ֆինանսական միջոցներ		
Աշխատանքային ռեսուրսներ	15	25
Տեխնիկական առաջարկ	55	75
Ընդամենը	70	100

- ա. «Մասնագիտական փորձառություն», «Տեխնիկական միջոցներ» և «Ֆինանսական միջոցներ» չափանիշների մասով մասնակցի որակավորումը գնահատվում է «Առկա է», եթե մասնակիցը համապատասխանում է այդ չափանիշների մասով սույն կարգի համաձայն հրավերով նախատեսված նվազագույն պահանջներին,
- բ. «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «25» միավոր՝ լավագույն առաջարկ: Լավագույն առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների որակավորումները,
- գ. լավագույն տեխնիկական առաջարկ ներկայացրած մասնակցի (մասնակիցների) առաջարկը գնահատվում է «Տեխնիկական առաջարկ» չափանիշի գնահատման մասով նախատեսված առավելագույն՝ «75» միավորով: Լավագույն գնահատված տեխնիկական առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր տեխնիկական առաջարկները.
- 18) հրավերի նվազագույն պահանջները չբավարարող հայտերը համարվում են տեխնիկապես անբավարար, և դրանք ներկայացրած մասնակիցները զրկվում են գնման գործընթացին հետագա մասնակցության հնարավորությունից.

19) հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ հանձնաժողովի անդամներն ստորագրում են արձանագրություն: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը երեք աշխատանքային օրվա ընթացքում արձանագրությունը գրավոր ծանուցմամբ կամ էլեկտրոնային եղանակով, միաժամանակ ուղարկում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին: Ծանուցմամբ նաև նշանակվում են գնային առաջարկների բացման նիստի օրը, վայրը և ժամը, բայց ոչ շուտ, քան ծանուցում ուղարկվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

20) գնային առաջարկների բացման նիստին կարող են ներկա գտնվել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները:

21) գնային առաջարկների բացման նիստում գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝

ա. հրապարակում է մասնակիցների որակավորման չափանիշների և տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները՝ համաձայն գնահատման արձանագրության,

բ. բացում է բավարար գնահատված մասնակիցների գնային առաջարկներ պարունակող ծրարները և հայտարարում յուրաքանչյուր մասնակցի գնային առաջարկը՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

22) գնային առաջարկների բացման նիստն արձանագրվում է: Արձանագրությունն ստորագրում են նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նիստին հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում արձանագրությունը գրավոր ծանուցմամբ կամ էլեկտրոնային եղանակով, միաժամանակ ուղարկում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

23) մասնակիցների հայտերը գնահատվում են հետևյալ կարգով՝

ա. որակավորված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի ֆինանսական առաջարկը գնահատվում է հարյուր միավոր, իսկ մյուս մասնակիցների ֆինանսական առաջարկներին տրվող միավորները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$ԳՄ = ՆԳ \times 100 / ԳԳ,$$

որտեղ՝

ԳՄ-ն գնային առաջարկին տրվող միավորն է,

ՆԳ-ն նվազագույն գինն է,

ԳԳ-ն գնահատվող մասնակցի առաջարկած գինն է,

բ. տեխնիկապես բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՄԳ = (ԳՄ \times 0.7 / 100) + (ՏԱ \times 0.3 / 100),$$

որտեղ՝

ՄԳ-ն մասնակցին տրվող գնահատականն է,

ԳՄ-ն մասնակցի գնային առաջարկին տրված միավորն է,

ՏԱ-ն մասնակցի որակավորման հատկանիշներին և տեխնիկական առաջարկին տրված միավորն է:

24) ընտրված մասնակից է ճանաչվում այն մասնակիցը, որին տրված գնահատականը (ՄԳ) ամենաբարձրն է:

25) եթե ընտրված մասնակցի գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ապա պատվիրատուն կարող է ընտրված մասնակցին առաջարկել նվազեցնել իր գնային առաջարկը: Անհամաձայնության դեպքում տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և պատվիրատուն բանակցությունների է հրավիրում 2-րդ, իսկ վերջինիս

անհամաձայնության դեպքում՝ 3-րդ տեղն զբաղեցրած մասնակցին, իսկ վերջինիս անհամաձայնության դեպքում ընթացակարգը հայտարարվում է չկայացած:

26) Օրենքի 9-րդ և 33-րդ հոդվածներով նախատեսված կարգով ընտրված մասնակցի հետ կնքվում է պայմանագիր:

XIV. ԿԵՆՏՐՈՆԱԳՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԳԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՈՒՄԸ

97. Կենտրոնացված կարգով կազմակերպվում են Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով նախատեսված պատվիրատուի կառավարման համակարգում գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետև՝ կազմակերպություն) կարիքների համար կատարվող այն գնումները, որոնք ներառված են պետական կառավարման մարմնի ղեկավարի (նախարար, գերատեսչության ղեկավար և այլն) կողմից սահմանված կենտրոնացված կարգով իրականացվող գնումների պլանում:

98. Մինչև յուրաքանչյուր տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 1-ը կազմակերպությունը կազմում և սույն կարգի 97-րդ կետում նշված՝ իր ընդհանուր կառավարումն իրականացնող լիազոր պետական (այսուհետև՝ վերադաս պատվիրատու) մարմին է ներկայացնում սույն կարգով սահմանված կարգով հաստատված գնման հայտերը՝ ըստ գնման առարկայի տեխնիկական բնութագրի, քանակի, մեկ միավորի առավելագույն գնի, մատակարարման վայրի և ժամկետների, վճարման պայմանների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մատակարարվելիք ապրանքի, կատարվելիք աշխատանքի կամ մատուցվելիք ծառայության որակի գնահատման նպատակով նաև փորձագիտական եզրակացություն ներկայացնելու պահանջի: Վերադաս պատվիրատուն ստացված հայտերի հիման վրա կազմում ու հրապարակում է կենտրոնացված կարգով իրականացվող գնումների պլանը: Գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով գնման հայտի հետ միաժամանակ ներկայացվում է նաև գնահատող հանձնաժողովի թեկնածությունը: Եթե վերադաս պատվիրատուի կառավարման համակարգում գործում է՝

1) հինգ և ավելի կազմակերպություն, ապա յուրաքանչյուր կազմակերպություն ներկայացնում է մեկ թեկնածություն, իսկ գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են այն հինգ կազմակերպությունների թեկնածուները, որոնց գնումները տվյալ ընթացակարգի շրջանակում ունեն համեմատաբար մեծ տեսակարար կշիռ:

2) հինգից պակաս կազմակերպություն, ապա յուրաքանչյուր կազմակերպություն ներկայացնում է երեք թեկնածություն, իսկ հանձնաժողովի կազմում ընդգրկվում են բոլոր կազմակերպություններից թեկնածուներ՝ հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի անդամների թվաքանակին ներկայացվող սահմանափակումները:

3) գնահատող հանձնաժողովի նախագահ է նշանակվում այն կազմակերպության ներկայացուցիչը, որի կարիքների համար կատարվող գնումը տվյալ ընթացակարգի շրջանակում ունի ամենամեծ տեսակարար կշիռը:

99. Կենտրոնացված կարգով իրականացվող գնումների պլանում ներառված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների՝ գնումների մասին Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան՝ գնման գործընթացները կազմակերպում է վերադաս պատվիրատուն: Ընդ որում, հնարավորության դեպքում մեկ վարչատարածքային միավորումում գտնվող կազմակերպությունների կարիքների համար գնվելիք ապրանքները, աշխատանքները և ծառայությունները համախմբվում են մեկ չափաբաժնում կամ չափաբաժինները ձևավորվում են հաշվի առնելով առանձին կազմակերպությունների կարիքները: Գնման ընթացակարգի ընտրությունն իրականացնում է վերադաս պատվիրատուն՝ հիմք ընդունելով Օրենքի և սույն կարգի պահանջները՝ բացառությամբ բանակցային ընթացակարգով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու գնման գործընթացի:

100. Կենտրոնացված կարգով գնումների կազմակերպումը, պայմանագրերի կնքումը, պայմանագրերի արդյունքների ընդունումը և դրանց դիմաց վճարումների կատարումն իրականացվում է սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր կազմակերպության կարիքի բավարարման համար ընտրված մասնակցի հետ վերադաս պատվիրատուն կնքում է առանձին պայմանագիր, որով պատվիրատուի (գնորդի) իրավունքների ու պարտականությունների իրականացումը վերապահվում է տվյալ կազմակերպությանը:

XV. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱՑՆՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

101. Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների հաշվառման նպատակով պատվիրատուի ղեկավարն Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով լիազոր մարմին է ներկայացնում գնման գործընթացի մասին հաշվետվություն (այսուհետ՝ հաշվետվություն), որի ձևը, ինչպես նաև՝

1) այն դեպքերը, երբ պայմանագրի պատճենը հաշվետվության անբաժան մասն է, և

2) հաշվետվության հիման վրա գործարքների հաշվառման կարգը սահմանում է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարը:

102. Հաշվետվությունը Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը չներկայացնելը կամ նրա կողմից ներկայացված հաշվետվության մեջ գնումների մասին Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջների նկատմամբ անհամապատասխանություն արձանագրելը կամ արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ պատվիրատուի կողմից ներկայացված պարզաբանումը չընդունելը հանգեցնում են տվյալ գնման պայմանագրի ֆինանսավորման կասեցմանը՝ մինչև արձանագրությունը կամ ընդունելի պարզաբանումը ներկայացնելը կամ Արցախի Հանրապետության կառավարության կողմից համապատասխան որոշման ընդունումը:

103. Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պատվիրատուն պայմանագիր կնքելու կամ դրանում փոփոխություն կատարելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում պայմանագրից քաղվածք (այսուհետ՝ քաղվածք), որի ձևը սահմանում է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարը:

XVI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄԸ

104. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարը:

105. Արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը տալիս է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու

մասին որոշում: Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը՝ ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար:

106. Սույն կարգի 105-րդ կետով նախատեսված գրավոր եզրակացության ձևը սահմանում է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարը: Ընդ որում՝

1) պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության՝ հաշվապահական ձևակերպման հիմքը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխանության մասին գրավոր եզրակացության հիման վրա պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից հաստատված արձանագրության առկայությունն է, իսկ մատակարարված ապրանքների պահեստ մուտքագրումը պահեստի պատասխանատուն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված արձանագրության պատճենի (ներառյալ գրավոր եզրակացության պատճենը) հիման վրա, որը վերջինիս տրամադրվում է դրա կազմման օրը:

2) պատասխանատու ստորաբաժանումն արձանագրության, ներառյալ գրավոր եզրակացության, իսկ ապրանքների դեպքում՝ նաև պահեստ մուտքագրման օրդերի պատճեններն այն կազմելու օրը գրավոր տրամադրում է պատվիրատուի ֆինանսական ծառայությանը:

3) պայմանագրով ավելացված արժեքի հարկ նախատեսված լինելու դեպքում՝ այն պետք է առանձին արտացոլվի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման մասին ներկայացված փաստաթղթում:

107. Շինարարական ծրագրերի գնման դեպքում կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 26-ի N 240 որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

2) կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 26-ի N 240 որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 26-ի N 240 որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրության

ստորագրվելը՝ պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների գումարը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարումը:

XVII. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

108. Գնման դիմաց վճարում կատարելու նպատակով՝ արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը (այսուհետ՝ վճարման հանձնարարագիր) և արձանագրության պատճենը ներկայացնում է գանձապետարան, կամ մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ: Պետության կարիքների համար չկատարվող գնման դիմաց վճարում կատարվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված կարգով:

109. Եթե պայմանագրով նախատեսված է կանխավճար, ապա՝

1) կանխավճարը հատկացնելու համար գանձապետարան է ներկայացվում, կամ լիազորված մարմնի գանձապետական համակարգ է մուտքագրվում վճարման հանձնարարագիրը և կանխավճարի ապահովման առկայությունը հավաստող փաստաթղթի պատճենը:

2) կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

110. Շինարարական աշխատանքների գնման դեպքում արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից ընդունված աշխատանքների արժեքի հինգ տոկոսի չափով կատարվում են նվազեցումներ (պահումներ): Նվազեցված (պահված) գումարը վճարվում է կապալառուին պայմանագրի ողջ ծավալով, բացառությամբ երաշխիքային ժամկետի, կատարման վերջնաժամկետից հաշված առնվազն 365 օրացուցային օր հետո:

111. Սույն կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարելու համար պայմանագրով սահմանված վերջնաժամկետից երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարում է վճարում:

112. Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետով նախատեսված ձևով գնում կատարվելու դեպքում գործարքի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ամփոփվում են տվյալ գործարքի հետ կապված՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում:

113. Լիազորված մարմինը սույն կարգի համաձայն վճարումն իրականացնելուց հետո կատարված գործարքի մասին հաշվետիբոջը տալիս է դրա գանձապետական հաշվից քաղվածք:

XVIII. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԶՄԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

114. Բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշումն իրավապարտադիր է և ենթակա է անվերապահ կատարման, եթե այն չի փոփոխվել կամ դատական կարգով անվավեր ճանաչվել:

115. Բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվությունն այդ որոշման հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն գրավոր ներկայացնում է Գնումների աջակցման կենտրոն, որը Գնումների աջակցման կենտրոնում հաշվառվում է:

116. Գնումների աջակցման կենտրոնում բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշման կատարման վերաբերյալ հաշվառումն իրականացնում է տվյալ բողոքի պատասխանատուն (քարտուղարը)՝ այն գրանցելով էլեկտրոնային միասնական մատյանում:

117. Հաշվառվում են հետևյալ տեղեկությունները՝

- 1) պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը.
- 2) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.
- 3) արձանագրված խախտման առարկան և պահանջը.
- 4) բողոք ներկայացրած անձի պահանջը.
- 5) բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշման համառոտ նկարագիրը.
- 6) պատվիրատուի կողմից բողոքարկման խորհրդի ընդունած որոշումից բխող գործողությունները կատարվելու կամ չկատարվելու մասին տեղեկատվությունը:

118. Բողոքարկման խորհրդի ընդունած որոշումից բխող գործողությունները պատվիրատուի կողմից չկատարվելու դեպքում՝ գնումների աջակցման կենտրոնը դրա մասին հայտնի դառնալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարզաբանումներ ստանալու նպատակով դիմում է՝

1) գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշումը չկատարող պատվիրատուին, եթե տվյալ գնման գործարքը պետության համար պարտավորություններ առաջացնող գործարք է.

2) գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշումը չկատարող պատվիրատուի կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմին, եթե տվյալ գնման գործարքը պետության համար պարտավորություններ առաջացնող գործարք չէ:

Սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված պատվիրատուի և (կամ) պատվիրատուի կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի կողմից նշված պարզաբանումը Գնումների աջակցման կենտրոնին է տրամադրվում դրա մասին դիմումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մանրամասն նշելով դրա չկատարման հանգամանքների, ինչպես նաև այն պաշտոնատար անձանց մասին տեղեկատվությունը, որոնց գործողությունների կամ անգործության հետևանքով չի կատարվել գնումների բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշումը:

Եթե տրամադրված պարզաբանման արդյունքում պարզվում է, որ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշումը չի կատարվել պատվիրատուի պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով, ապա Գնումների աջակցման կենտրոնը նման տեղեկատվությունն ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկատվություն է տրամադրում Արցախի Հանրապետության գլխավոր դատախազությանը:

119. Սույն կարգի 117-րդ կետով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում՝ բողոքարկման խորհրդի կողմից ընդունված, սակայն չկատարված որոշումների մասին Գնումների աջակցման կենտրոնը տեղեկատվություն է տրամադրում Արցախի Հանրապետության գլխավոր դատախազությանը:

120. Բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացրած անձի կողմից բողոքի քննության ընթացքում բողոքը հետ վերցվելու դեպքում Գնումների աջակցման կենտրոնը շարունակում է ուսումնասիրել և ներկայացնել եզրակացություն՝ բողոքի քննման համար նախատեսված ժամկետներում:

121. Գնումների բողոքարկման խորհրդի կողմից գնումների մասին Արցախի Հանրապետության օրենսդրության խախտմամբ որոշում ընդունվելու դեպքում՝ բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշումները դատական կարգով բողոքարկվելու դեպքում Գնումների աջակցման կենտրոնը կարող է հրաժարվել բողոքարկման խորհրդի անունից դատարանում հանդես գալուց: Բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքի, բողոքարկման խորհրդի կողմից ընդունված

որոշումները դատական կարգով բողոքարկվելու դեպքում բողոքարկման խորհրդի անունից դատարանում հանդես է գալիս Գնումների աջակցման կենտրոնը:

122. Գնումների բողոքարկման խորհուրդը ձևավորվում է պետական կառավարման մարմինների կողմից առաջադրված մեկական ներկայացուցիչներից, և նրա անհատական կազմը հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

**XIX. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԹԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ԱՌԱՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

123. Լիազոր մարմնի կողմից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու նպատակով գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու դեպքում լիազոր մարմինը դիմում է Գնումների աջակցման կենտրոնին՝ առաջարկելով ուսումնասիրել ներկայացված նյութերը և հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

Եթե ներկայացված նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու համար չկան բավարար հիմքեր, ապա Գնումների աջակցման կենտրոնը՝ լիազոր մարմնի կողմից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու հիմքերի բացակայության վերաբերյալ կազմում է եզրակացություն և ներկայացնում լիազոր մարմին:

Լիազոր մարմինը քննարկում է Գնումների աջակցման կենտրոնի կողմից ներկայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի բացակայության վերաբերյալ տրամադրված եզրակացությունը և՝

1) դադարեցնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու նպատակով նախաձեռնած գործընթացը և տեղեկացնում դիմող պատվիրատուին, եթե համաձայնվում է ներկայացված եզրակացությանը:

2) գնումների աջակցման կենտրոն է ներկայացնում լիազոր մարմնի առարկությունները և պահանջում նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու ընթացակարգը, եթե չի համաձայնվում ներկայացված եզրակացությանը:

124. «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝

1) վեց ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է:

2) վեց ամսվանից մինչև մեկ տարի ժամկետով՝

ա. եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորը, սակայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է,

բ. եթե օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ ընդունվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար,

գ. եթե որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց.

3) մեկ տարվանից մինչև մեկ տարի վեց ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի հնգապատիկը, սակայն չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է.

4) մեկ տարի վեց ամսվանից մինչև երեք տարի ժամկետով, եթե մասնակցի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարվա ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար և նրա դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) երեք տարի ժամկետով՝

ա. եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը,

բ. եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

23 մայիսի 2019թ.

N 407-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 589 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Բերքաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,18 հեկտար վարելահողը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

23 մայիսի 2019թ.

N 412-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 384 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քոասնի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,045 հեկտար բազմամյա տնկարկը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

23 մայիսի 2019թ.

N 413-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Ծաղկաբերդի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 9,67446 հեկտար այլ հողատեսքերը, համաձայն հավելվածի, փոխադրել Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ Էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 մայիսի 2019թ.

N 420-Ն

ք. Ստեփանակերտ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Արցախի Հանրապետության Նախագահի 2019 թվականի մայիսի 16-ի «2019 թվականի ամառային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին» ՆՀ-61-Ն հրամանագրի՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է.**

1. Արցախի Հանրապետության ամառային զորակոչի ընդհանուր ղեկավարումն ապահովելու նպատակով ստեղծել հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի և շրջանների (Ստեփանակերտ քաղաքի) զորակոչային հանձնաժողովներ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հաստատել հանրապետական զորակոչային հանձնաժողովին կից բժշկական հանձնախմբի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Ստեփանակերտ քաղաքի և շրջանների զորակոչային հանձնաժողովների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը հանձնարարել հանրապետական զորակոչային հանձնաժողովի նախագահին:

4. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին՝

1) ամառային զորակոչն անցկացնել սահմանված կարգով՝ 2019 թվականի հուլիս ամսին.

2) զորակոչից խուսափող Արցախի Հանրապետության քաղաքացիներին վերաբերող նյութերն ուղարկել Արցախի Հանրապետության ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ.

3) ապահովել Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատների կողմից զորակոչիկների սահմանված կարգով ներկայացումը կցագրված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ՝ կանխարգելիչ պատվաստումներ ստանալու համար՝ առնվազն մեկ ամիս առաջ մինչև զորակոչը:

5. Առաջարկել Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին՝ զորակոչից խուսափող Արցախի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև այդ բնույթի գործերով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը վերցնել անմիջական վերահսկողության տակ:

6. Արցախի Հանրապետության նախարարությունների, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների և կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) ղեկավարներին՝

1) քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների ցուցակները ստանալուց հետո ապահովել նրանց նկատմամբ աշխատանքային, տնտեսական և այլ ոլորտներում՝ Արցախի

Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառումը և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին:

2) իրավասության սահմաններում ապահովել Արցախի Հանրապետության զորակոչային տարիքի քաղաքացիների ներկայանալը զինվորական կոմիսարիատներ:

7. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին՝

1) ամառային զորակոչի անցկացման համար զինվորական կոմիսարիատներն ապահովել զորակոչային տեղամասերով, սպասարկող անձնակազմերով, ինչպես նաև նյութական և ավտոտրանսպորտային միջոցներով:

2) զինվորական կոմիսարների ներկայացմամբ հաստատել տարածքային զորակոչային հանձնաժողովների կազմերը (ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների)՝ դրանցում ընդգրկելով վարչատարածքային միավորի սահմաններում գործող բժշկական հաստատությունների առաջատար բժիշկ-մասնագետներին, իսկ Ստեփանակերտում, անհրաժեշտության դեպքում, նաև՝ հանրապետական ենթակայության բժշկական հաստատությունների բժիշկ-մասնագետներին:

8. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին՝ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության ներկայացրած հայտով կազմակերպել ֆյուրո (ռենտգեն) զննում, ինչպես նաև կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով հանձնարարել համակարգի բուժկանխարգելիչ հաստատություններին՝ ապահովել անհրաժեշտ քանակով պատվաստանյութերով և ֆյուրո (ռենտգեն) ժապավեններով:

9. Արցախի Հանրապետության ոստիկանության պետին՝

1) ապահովել զորակոչիկների անվտանգ փոխադրումը և հասարակական կարգի պահպանումն Արցախի Հանրապետության զորակոչային տեղամասերում:

2) ապահովել Արցախի Հանրապետության տարածքում և Արցախի Հանրապետության տարածքից դուրս՝ զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումն ու նրանց ներկայանալը զորակոչային տեղամասեր:

3) զորակոչի ընթացքում զորակոչիկներին Ստեփանակերտի սահմաններից դուրս փոխադրող ավտոբուսներն ուղեկցելու համար հանրապետական հավաքակայանին կցել Ճանապարհային ոստիկանության համապատասխան անձնակազմ:

10. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարին՝ ապահովել զորակոչիկների փոխադրումը զինվորական կոմիսարիատներից հանրապետական հավաքակայան՝ ըստ զինվորական կոմիսարիատների ներկայացրած հայտերի:

11. Սահմանել, որ զորակոչի կազմակերպման ծախսերը փոխհատուցվում են Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության միջոցների հաշվին՝ բացառությամբ սույն որոշման 8-րդ կետով կատարվող ծախսերի:

12. Արցախի Հանրապետության ոստիկանության պետին, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ զորակոչից խուսափելու դեպքերը կանխելու նպատակով ամառային զորակոչի ընթացքում ուժեղացնել վերահսկողությունն Արցախի Հանրապետության

սահմանային հաղորդակցության ուղիներում, զորակոչային տարիքի Արցախի Հանրապետության քաղաքացիների Արցախի Հանրապետությունից մեկնումը թույլատրել միայն զինվորական գրքույկներում ժամկետային զինվորական ծառայությունն ավարտելու կամ հիվանդության պատճառով պահեստագործում գտնվելու, իսկ ամրակցման (նախնական հաշվառման) վկայականներում՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից օգտվելու մասին զինվորական կոմիսարիատների համապատասխան նշումների առկայության դեպքում:

13. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարին՝

1) 2019 թվականի ամառային զորակոչի ընթացքում զորակոչային ռեսուրսներն առավելագույնս օգտագործելու նպատակով փոխադրման, ավարտական քննությունները, դիպլոմային աշխատանքների պաշտպանություններն ավարտել

ա. դպրոցներում, քոլեջներում, ուսումնարաններում՝ մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը,

բ. բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ մինչև 2019 թվականի հունիսի 22-ը,

գ. մինչև 2019 թվականի հունիսի 8-ը Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատին տրամադրել մինչև 2019 թվականի հունիսի 30-ը ներառյալ 18 տարին լրացող՝ դպրոցները, քոլեջները և ուսումնարաններն ավարտող և բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննություններին մասնակցելու հայտ ներկայացրած արական սեռի քաղաքացիների անվանական ցուցակները:

14. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին և հանրապետական զորակոչային հանձնաժողովին:

15. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ջ Մ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Մխիթար Էդուարդի Ավշադյան - Արցախի Հանրապետության զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Մամվել Կառլենի Մելքունյան - «Արևիկ» բուժմիավորում փակ բաժնետիրական ընկերության վիրաբուժական բաժանմունքի պետ, հանձնաժողովի անդամ

Դավիթ Ռոբերտի Արզումանյան - Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմի ղեկավար, հանձնաժողովի անդամ

Արամայիս Գալուստի Ավագյան - Արցախի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական, հանձնաժողովի անդամ

Գագիկ Յուրիի Հարությունյան - Արցախի Հանրապետության ոստիկանության հասարակական կարգի ապահովման բաժնի պետ, հանձնաժողովի անդամ

Էրիկ Արտյոմի Ծատրյան - Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետ, հանձնաժողովի քարտուղար

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ձ Մ

ՇՐՋԱՆՆԵՐԻ (ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ) ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Գրիգորի Այոռայի Գասպարյան - Ստեփանակերտի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Զորեն Սերգեյի Ղազարյան - Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

Վաղիմ Վյաչեսլավի Հովսեփյան - Ստեփանակերտ քաղաքի դատախազության ավագ դատախազ, հանձնաժողովի անդամ

Վահրամ Ռաֆայելի Բալայան - Ստեփանակերտ քաղաքի ոստիկանության վարչության ԱԳԲ պետ, հանձնաժողովի անդամ

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Դավիթ Բորիսի Սախյան - Շուշիի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Մարգիս Մամիկոնի Գալստյան - Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ

Արտուր Սերգեյի Մարգարյան - Շուշիի շրջանի դատախազության դատախազ, հանձնաժողովի անդամ

Միքայել Յուրիի Ավանեսյան - Շուշիի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՀԱԿՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Անդրեյ Վալերիի Ներսեսյան - Հաղրութի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Նվեր Վազգենի Գրիգորյան - Հաղրութի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ

Գագիկ Սերգեյի Իշխանյան - Հաղրութի շրջանի դատախազ, հանձնաժողովի անդամ

Արմեն Լյովայի Բաղդասարյան - Հաղրութի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արսեն Վաղարշակի Աղաբեկյան - Մարտունու զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Վիլեն Անդրեյի Ալավերդյան - Մարտունու շրջանի վարչակազմի ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ-իրավախորհրդատու, հանձնաժողովի անդամ

Հովիկ Ռոդիկի Մկրտչյան - Մարտունու շրջանի դատախազության ավագ դատախազ, հանձնաժողովի անդամ

Մարատ Բորիկի Հարությունյան - Մարտունու շրջանի ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, հանձնաժողովի անդամ

ԱՄԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արծվիկ Անդրանիկի Գաբրիելյան - Ասկերանի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Վլադիմիր Միքայելի Բալասանյան - Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ

Աշոտ Յուրիի Ղուլյան - Ասկերանի շրջանի դատախազության ավագ դատախազ, հանձնաժողովի անդամ

Նվեր Սլավայի Մեթրույան - Ասկերանի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արմեն Մադաթի Շիրինյան - Մարտակերտի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Նվեր Ռոբիկի Մախյան - Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ

Վահրամ Ալբերտի Ավանեսյան - Մարտակերտի շրջանի դատախազության դատախազ, հանձնաժողովի անդամ

Հարություն Արարատի Մահակյան - Մարտակերտի շրջանի ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Մխիթար Միշայի Ավանեսյան - Շահումյանի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Կարեն Ալբերտի Եղիշյան - Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ

Դավիթ Վլադիմիրի Ստեփանյան - Շահումյանի շրջանի դատախազ, հանձնաժողովի անդամ

Նարեկ Ռուսլանի Մադիսյան - Շահումյանի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ստեփան Յուրիկի Օհանջանյան - Քաշաթաղի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Հովհաննես Ադամի Մահակյան - Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ

Իգոր Իսմաիլի Ալավերդյան - Քաշաթաղի շրջանի դատախազության ավագ դատախազ, հանձնաժողովի անդամ

Արմեն Լյովայի Բալիկյան - Քաշաթաղի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ջ Մ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉՍՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ
ԿԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՆՄԲԻ

Կարինե Էդուարդի Բաղյան	- թերապևտ
Հակոբ Գրիշայի Հակոբյան	- հոգեբույժ
Սրբուհի Ռոմիկի Բաղդասարյան	- նյարդաբան
Անժելա Շահենի Դանիելյան	- քիթ-կոկորդ-ականջաբան
Էդվարդ Ռաֆայելի Ստեփանյան	- վիրաբույժ
Սևակ Էմիրջանի Ասլանյան	- ակնաբույժ
Լեոնիդ Եղիշեի Համբարձումյան	- մաշկաբան
Ինեսա Միքայելի Ադամյան	- սրտաբան
Կարեն Դմիտրիի Դավթյան	- վնասվածքաբան
Աիդա Երեմի Հարությունյան	- ատամնաբույժ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 մայիսի 2019թ.

N 424-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N 1135-Ն որոշման N 1 հավելվածի, N 2 հավելվածի N 1 աղյուսակի և N 3 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության 2019 թվականի մայիսի 3-ի ՀՕ-23-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի մայիսի 29-ի N 424-Ն որոշման

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)			
	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	-	1 500 000,0	2 000 000,0	3 000 000,0
այդ թվում՝				
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	-	1 500 000,0	2 000 000,0	3 000 000,0

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի մայիսի 29-ի N 424-Ն որոշման

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	2 250 000,0	2 700 000,0	3 000 000,0
			այդ թվում՝				
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	722 200,0	420 000,0	-
	1		Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	-	-	-	-
		1	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	-	-	-	-
		02	Տնտեսական զարգացման ծրագրեր	-	(440,0)	-	-
			ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածք-	-	(440,0)	-	-

			ների նախարարություն				
		10	Պետական և համայնքային գույքի մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների իրականացում	-	440,0	-	-
			ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	-	440,0	-	-
2			Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	-	350 000,0	50 000,0	-
		1	Գյուղատնտեսություն	-	350 000,0	50 000,0	-
		10	Աջակցություն գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին	-	250 000,0	-	-
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	250 000,0	-	-
		12	Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր	-	100 000,0	50 000,0	-
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	100 000,0	50 000,0	-
3			Վառելիք և էներգետիկա	-	350 000,0	350 000,0	-
		5	Էլեկտրաէներգիա	-	350 000,0	350 000,0	-
		01	Բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ծախսերի որոշ մասի սուբսիդավորում	-	350 000,0	350 000,0	-
			ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	-	350 000,0	350 000,0	-
7			Այլ բնագավառներ	-	22 200,0	20 000,0	-
		2	Հյուրանոցներ և հասարակական սննդի օբյեկտներ	-	22 200,0	20 000,0	-
		01	Պատվիրակությունների ընդունելություններ	-	22 200,0	20 000,0	-
			ԱՀ Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանում	-	22 200,0	20 000,0	-
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՉՂԱՍՎՈՂ ԾԱՅՄԵՐ	-	1 527 800,0	2 280 000,0	3 000 000,0
1			Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	-	447 800,0	270 000,0	-
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	447 800,0	270 000,0	-
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	447 800,0	270 000,0	-
			ԱՀ կառավարություն	-	447 800,0	270 000,0	-
2			Այլ ծախսեր	-	1 080 000,0	2 010 000,0	3 000 000,0
		1	Այլ ծրագրեր	-	1 080 000,0	2 010 000,0	3 000 000,0
		02	Կայսիտայ ներդրումներ	-	1 000 000,0	2 000 000,0	3 000 000,0
			ԱՀ քաղաքաշինության նախարարություն	-	913 700,0	1 913 700,0	2 913 700,0

			ԱՀ պաշտպանության նախարարություն	-	80 000,0	80 000,0	80 000,0
			Ասկերանի շրջանի վարչակազմ		6 300,0	6 300,0	6 300,0
		06	Գույքի գնման ծախսեր	-	80 000,0	10 000,0	-
			ԱՀ կառավարություն	-	80 000,0	10 000,0	-

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 3
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի մայիսի 29-ի N 424-Ն որոշման

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ԴՐԱՆՑ ՏԱՐԲԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)			
	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	-	750 000,0	700 000,0	-
այդ թվում՝				
Փոխառու զուտ միջոցներ	-	750 000,0	700 000,0	-
1. Վարկերի և փոխառվածությունների ստացում	-	750 000,0	700 000,0	-

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2019թ.

N 432-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 46-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N 1135-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 7-ի «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված գյուղատնտեսական ծրագրերի և միջոցառումների մասին» N 46-Ա որոշմամբ հաստատված հավելվածի՝

- 1) 4-րդ կետում «79 825,0» թիվը փոխարինել «75 825,0» թվով.
- 2) 4-րդ կետի 1-ին տողում «72 670,6» թիվը փոխարինել «68 670,6» թվով.
- 3) 10-րդ կետում «1 000,0» թիվը փոխարինել «3 990,0» թվով.
- 4) «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «4 979 111,1» թիվը փոխարինել «4 978 101,1» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի մայիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ վակացվածներով)			
				Առաջին եռամ- սյակ	Առաջին կիսամ- յակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	-
	2		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսոր- դություն	-	-	-	-
		1	Գյուղատնտեսություն	-	-	-	-
		01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	-	1 010.0	1 010.0	1 010.0
			ԱՀ գյուղատնտեսության նա- խարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	-	1 010.0	1 010.0	1 010.0
		05	Պատվաստուկների և այլ հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում	-	(5 000.0)	(5 000.0)	(4 000.0)
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	(5 000.0)	(5 000.0)	(4 000.0)
		11	ԱՀ գյուղատնտեսության նախարարության համակար- գի հիմնարկների համար կենտրոնացված կարգով գույքի և սարքավորումների ձեռքբերում	-	3 990.0	3 990.0	2 990.0
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	3 990.0	3 990.0	2 990.0

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2019թ.

N 433-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 152 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 31-ի «ԼՂՀ տարածք ներմուծվող և արտահանվող ապրանքանյութական արժեքների հաշվառման միջոցառումների մասին» N152 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, նախաբանում, 2-4-րդ կետերում և որոշմամբ հաստատված կարգի 1-ին, 4-րդ, 9-11-րդ կետերում «ԼՂՀ» հապավումները փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

2) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ստեղծել հետևյալ հսկիչ կետերը և սահմանել դրանց տեղակայման վայրերը.

1) «Աղավնո» հսկիչ կետ՝ տեղակայման վայրը՝ Քաշաթաղի շրջան, Աղավնո համայնք, կամրջի մոտ.

2) «Խարխափուտ» հսկիչ կետ՝ տեղակայման վայրը՝ Շահումյանի շրջան, Նոր Խարխափուտ համայնք, կամրջի մոտ.

3) «Միջնաբերդ» հսկիչ կետ՝ տեղակայման վայրը՝ Շահումյանի շրջան, Քարվաճառ համայնք, Քարվաճառ-Վարդենիս նոր ճանապարհահատվածի առաջին կիլոմետր.

4) «Սանասար» հսկիչ կետ՝ տեղակայման վայրը՝ Քաշաթաղի շրջան, Հակարի համայնք, 2 կիլոմետր հեռավորությամբ՝ մինչև Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ներքին Խնձորեսկ գյուղի խաչմերուկը:».

3) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով.

«1.1. Սահմանել, որ ապրանքների ներմուծումն Արցախի Հանրապետության տարածք և արտահանումն Արցախի Հանրապետության տարածքից, ինչպես նաև Արցախի Հանրապետության սահմանով ուղևորների տեղափոխումը կատարվում է սույն որոշման 1-ին կետով ստեղծված հսկիչ կետերով:».

4) որոշման 3-րդ, 4-րդ կետերում և որոշմամբ հաստատված կարգի 4-րդ, 10-րդ ու 11-րդ կետերում «հարկային պետական վարչություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «հարկային մարմին» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

5) որոշմամբ հաստատված կարգի՝

ա. վերնագրում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

բ. նախաբանում «ԼՂՀ տարածք» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածք» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2019թ.

N 434-Ն

ք. Ստեփանակերտ

ՄԻԶԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 319-Ն ՈՐՈՇՈՒՄՆ
ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջադրում է.**

1. Հաստատել՝

1) Միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի մայիսի 30-ի «Միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի կանոնադրությունն ու կազմը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1999 թվականի նոյեմբերի 16-ի N 118 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 319-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովը հուշարձանների հետախուզման ու հնագիտական պեղումների թույլտվության, նպատակահարմարության, արդյունավետության խնդիրները քննարկող և գիտամեթոդական եզրակացություններ տվող խորհրդակցական մարմին է, որը գործում է Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությանը կից (այսուհետ՝ Նախարարություն):

2. Միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) եզրակացությունները Նախարարության կողմից հաստատվելուց հետո պարտադիր են հուշարձանների հետախուզում և հնագիտական պեղումներ իրականացնող իրավաբանական ու ֆիզիկական անձանց համար:

3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Հանձնաժողովի խնդիրներն ու գործառնություններն են՝

1) հանրապետության տարածքում գտնվող հուշարձանների հետախուզման և հնագիտական պեղումների վերաբերյալ գիտական հաշվետվությունների, նյութերի, փաստաթղթերի և տեղեկությունների ստացումն ու քննարկումը:

2) հանրապետության տարածքում գտնվող հուշարձանների հետախուզման և հնագիտական պեղումների ու գիտահետազոտական ծրագրերի, նախագծերի և նպատակային աշխատանքների քննարկումն ու դրանց իրականացման անհրաժեշտության վերաբերյալ համապատասխան եզրակացություն տալը:

3) հանրապետության տարածքում գտնվող հուշարձանների հետախուզման և հնագիտական պեղումների կատարման թույլտվության վերաբերյալ եզրակացություն տալը:

4) հանրապետության տարածքում գտնվող հուշարձանների հետախուզման և հնագիտական պեղումների ծրագրերի ու աշխատանքների համակարգված իրականացման նպատակով Արցախի Հանրապետության և օտարերկրյա շահագրգիռ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ համագործակցության ապահովումը:

5. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում Նախարարություն է ներկայացնում առաջարկություններ Արցախի Հանրապետության օտարերկրյա պետությունների տարածքներում գտնվող վտանգված հայկական հուշարձանների պահպանման միջոցառումների իրականացման, ինչպես նաև դրանց հետախուզման, հնագիտական պեղումների և ֆինանսավորման վերաբերյալ:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

6. Հանձնաժողովի գործունեության հետ կապված ծախսերը, Նախարարության սահմանած կարգով, փոխհատուցվում են հնագիտական պեղումներ ձեռնարկողների տրամադրած միջոցներից, որոնք կուտակվում են հատուկ բացված բանկային հաշվեհամարում:

7. Հանձնաժողովի՝ հնավայր մեկնման տրանսպորտային ծախսերը սահմանվում են տվյալ պահին գործող շուկայական գներով, իսկ օրապահիկը՝ Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված չափերով:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպում է նիստերի ձևով, ազատ քննարկման և հրապարակայնության պայմաններում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հուշարձանների տարածքում: Նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

9. Հանձնաժողովի աշխատանքը ղեկավարում է Հանձնաժողովի նախագահը:

10. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում է Հանձնաժողովի նիստերը և վարում դրանք.

2) կազմակերպում է Հանձնաժողովի աշխատանքները, պատասխանատվություն կրում Հանձնաժողովի խնդիրների և գործառույթների իրականացման համար:

11. Հանձնաժողովի նախագահի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է Հանձնաժողովի նախագահի տեղակալը:

12. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է Հանձնաժողովի նիստի օրակարգը, կազմակերպում նիստերի անցկացումը.

2) իրականացնում է Հանձնաժողովի ընթացիկ կազմակերպման և տեխնիկական աշխատանքները.

3) համակարգում և քննարկման է ներկայացնում Հանձնաժողովի գործունեությանն առնչվող ընթացիկ հարցերը.

4) կազմում և Հանձնաժողովի նախագահին է ներկայացնում հաշվետվություն ընթացիկ աշխատանքների վերաբերյալ:

13. Հանձնաժողովի անդամները Հանձնաժողովի նիստից առնվազն երկու շաբաթ առաջ, Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկելու նպատակով, առաջադրում են հարցեր և Հանձնաժողովի նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ կարծիք հայտնում դրա օրակարգի վերաբերյալ:

14. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է Հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

15. Նախարարության և Հանձնաժողովի միջև ծագած տարաձայնությունների դեպքում Նախարարությունը կենսագործում է իր ընդունած որոշումը՝ դրա մասին տեղյակ պահելով Արցախի Հանրապետության կառավարությանը:

16. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները՝ դրանց անցկացման պահից, իսկ որոշումները՝ Նախարարության կողմից հաստատվելու պահից մեկշաբաթյա ժամկետում ուղարկվում են Հանձնաժողովի անդամներին և համապատասխան շահագրգիռ կազմակերպություններ:

17. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ձ Մ

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Լեռնիկ Հովհաննիսյան Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար, **հանձնաժողովի նախագահ**
2. Արման Գրիգորյան Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության աշխատակազմի պատմամշակութային հուշարձանների բաժնի պետ, **հանձնաժողովի նախագահի տեղակալ**
3. Սլավա Սարգսյան «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության փոխտնօրեն (**համաձայնությամբ**)
4. Իգոր Թևոսյան Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության աշխատակազմի պատմամշակութային հուշարձանների բաժնի գլխավոր մասնագետ (**հանձնաժողովի քարտուղար**)
5. Աշոտ Օհանյան Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության աշխատակազմի զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության ճարտարապետ-վերահսկող (**համաձայնությամբ**)
6. Վարդգես Սաֆարյան Արցախի պետական համալսարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, հնագետ (**համաձայնությամբ**)
7. Յուրի Առաքելյան Արցախի պետական համալսարանի դասախոս, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ (**համաձայնությամբ**)
8. Վահրամ Հայրապետյան ««Կանաչ Արցախ» կենտրոնային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**համաձայնությամբ**)
9. Ժաննա Առստամյան «Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն (**համաձայնությամբ**)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քրեական նյութ ՇԻԴ/0001/13/19

Քրեական նյութ ՇԻԴ/0001/13/19

Նախագահող դատավոր՝ Ռ. Ջհանգիրյան
Դատավորներ՝ Լ. Ավանեսյան
Ն. Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ

3 հունիսի 2019թ.

ԱՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
մասնակցությամբ՝ դատավորներ

Հ. Աբրահամյանի
Ա. Աբրահամյանի
Գ. Գրիգորյանի
Ի. Կարապետյանի
Կ. Ղարայանի

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ՝ դատախազ՝
պաշտպան՝
դատապարտյալ՝

Ա. Բաղդասարյանի
Լ. Բարսեղյանի
Ռ. Սարտիրոսյանի
Վ. Գրիգորյանի

դոնբաց դատական նիստում քննելով Վլադիմիր Միքայելի Գրիգորյանի նկատմամբ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու մասին միջնորդությունը դատական ստուգման ենթարկելու օրինականության ու հիմնավորվածության վերաբերյալ ԱՀ վերաքննիչ դատարանի 2019թ. ապրիլի 5-ի որոշման դեմ ԱՀ գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Ս. Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի /այսուհետ՝ Դատարան/ 2018 թվականի մայիսի 31-ի դատավճռով Վլադիմիր Միքայելի Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 254.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300.000 ՀՀ դրամի չափով՝ տասն ամսվա ընթացքում, յուրաքանչյուր ամիս 30.000 ՀՀ դրամի չափով, վճարելու արտոնությամբ:

Դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել 2018թ. հունիսի 3-ին, որի կատարման համար տրվել է կարգադրություն, և Վլադիմիր Գրիգորյանը 2018

թվականի հուլիսի 6-ին հաշվառման է վերցվել ԱՀ ոստիկանության քրեակատարողական վարչության Ստեփանակերտի քրեակատարողական տեսչությունում:

Դատարանի 2018թ. հոկտեմբերի 24-ի ԸԲԴ/0001/13/19 որոշմամբ դատավճռով նշանակված տուգանքի չվճարված մասը՝ 270.000 ՀՀ դրամը, փոխարինվել է 810 ժամ տևողությամբ հանրային աշխատանքներով:

Դատարանի 2019թ. հունվարի 22-ի ԸԲԴ/0001/13/19 որոշմամբ դատապարտյալ Վլադիմիր Միքայելի Գրիգորյանի նկատմամբ Դատարանի 2018թ. հոկտեմբերի 24-ի ԸԲԴ/0001/13/19 որոշմամբ նշանակված 810 ժամ տևողությամբ հանրային աշխատանքները փոխարինվել են 8/ուր/ ամիս 27/քսանյոթ/ օր ժամկետով ազատազրկմամբ:

Դատարանի 2019թ. հունվարի 22-ի որոշման կատարման համար տրվել է կարգադրություն, և դատապարտյալը 2019թ. փետրվարի 6-ին տեղափոխվել է ԱՀ ոստիկանության քրեակատարողական վարչություն:

Փաստաբան Ռաֆիկ Մարտիրոսյանը 2019թ. փետրվարի 14-ին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ 2019թ. հունվարի 22-ի՝ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու մասին միջնորդությունը քննության առնելու մասին ԸԲԴ/0001/13/19 որոշման բողոքարկման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և որոշման կատարումը կասեցնելու վերաբերյալ:

Դատարանի 2019թ. փետրվարի 22-ի ԸԲԴ/0001/13/19 որոշմամբ դատապարտյալ Վլադիմիր Միքայելի Գրիգորյանի փաստաբան Ռաֆիկ Մարտիրոսյանի միջնորդությունները՝ Դատարանի՝ 2019թ. հունվարի 22-ի՝ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու մասին միջնորդությունը քննության առնելու մասին ԸԲԴ/0001/13/19 որոշման բողոքարկման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և որոշման կատարումը կասեցնելու մասին, մերժվել են:

Նշված որոշման դեմ 2019թ. փետրվարի 27-ին դատապարտյալ Վլադիմիր Միքայելի Գրիգորյանի փաստաբան Ռաֆիկ Մարտիրոսյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ խնդրելով բեկանել 2019թ. փետրվարի 22-ի որոշումը և բավարարել բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը:

ԱՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2019թ. մարտի 1-ի որոշմամբ դատապարտյալ Վլադիմիր Միքայելի Գրիգորյանի փաստաբան Ռաֆիկ Մարտիրոսյանի ներկայացրած վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական քննության:

Վերաքննիչ դատարանի 2019թ. մարտի 20-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 2019թ. փետրվարի 22-ի որոշումը բեկանվել, դատապարտյալի փաստաբանի 2019թ. փետրվարի 14-ի միջնորդությունը բավարարվել և Դատարանի 2019թ. հունվարի 22-ի՝ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու մասին միջնորդությունը քննության առնելու մասին որոշման բողոքարկման բաց թողնված մեկամսյա ժամկետը վերականգնվել է:

Դատարանի 2019թ. հունվարի 22-ի որոշման դեմ 2019 թվականի մարտի 25-ին Վլադիմիր Միքայելի Գրիգորյանի փաստաբան Ռաֆիկ Մարտիրոսյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ խնդրելով բեկանել

Դատարանի 2019 թվականի հունվարի 22-ի որոշումն ամբողջությամբ, կարճել գործի վարույթը և դատապարտյալին ազատել պատժի կրումից:

Վերաքննիչ դատարանի 2019 թվականի մարտի 26-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է, թերությունները վերացնելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանվել տասնօրյա ժամկետ որոշումը ստանալու պահից սկսած:

Դատապարտյալ Վլադիմիր Միքայելի Գրիգորյանի փաստաբան Ռաֆիկ Մարտիրոսյանը 2019 թվականի մարտի 29-ին կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանի 2019 թվականի մարտի 29-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական նիստ:

ԱՀ վերաքննիչ դատարանի 2019թ. ապրիլի 5-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է: Դատապարտյալ Վլադիմիր Միքայելի Գրիգորյանի վերաբերյալ ՀԻԴ/0001/13/19 քրեական նյութով Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2019թ. հունվարի 22-ի որոշումը բեկանվել և քրեական նյութի վարույթը կարճվել է՝ դատավճռով նշանակված պատիժը դատապարտյալի կողմից ամբողջությամբ կրած լինելու հիմքով: Դատապարտյալ Վլադիմիր Միքայելի Գրիգորյանն անհապաղ ազատվել է Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2019թ. հունվարի 22-ի որոշմամբ փոխարինված պատժի՝ 8 /ուր/ ամիս 27 /քսանյոթ/ օր ժամկետով ազատագրկման կրումից:

Նշված որոշման դեմ 2019 թվականի ապրիլի 18-ին ԱՀ գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Ս.Հակոբյանի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2019թ. մայիսի 6-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2019 թվականի մայիսի 20-ին վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել դատապարտյալ Վլադիմիր Միքայելի Գրիգորյանի ներկայացուցիչ, փաստաբան Ռ.Մարտիրոսյանը՝ նշելով, որ բողոքաբերի կողմից վկայակոչված հողվածները բովանդակային անհրաժեշտ հիմնավորում չունեն՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը փոփոխելու համար, իսկ վերլուծության ենթարկված նորմերի իրավական բովանդակության և եզրահանգման միջև տրամաբանական և օրգանական կապը թույլ է և ոչ ամբողջական:

2.Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1/Դատապարտյալ Վ.Գրիգորյանը 2018թ. նոյեմբերի 26-ին գրավոր հայտարարություն է տվել այն մասին, որ հրաժարվում է հանրային աշխատանքներ կատարելուց, իսկ 2018թ. դեկտեմբերի 4-ին տված բացատրությամբ վերահաստատել է իր այդ դիրքորոշումը: Դատարանը 2019 թվականի հունվարի 22-ի որոշման մեջ նշել է, որ դատական նիստում հետազոտված, դատապարտյալ Վ.Գրիգորյանի վերաբերյալ թիվ 88/18 անձնական գործից դիտվում է, որ Դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ նշանակված 810 ժամ հանրային աշխատանքները վերջինս պետք է սկսեր 2018թ. դեկտեմբերի 3-ից, ու այդ ամսվա համար սահմանված էր 84 ժամ հանրային աշխատանք յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 6:00-ից 10:00-ն:

2/«Սահմաքրում» ՀՈԱԿ-ի կնիքով և տնօրենի ստորագրությամբ հաստատված առ 03.12.2018թ. հանրային աշխատանքների հաշվառման ժամանակացույցից և գրությունից հետևում է, որ դատապարտյալ Վ.Գրիգորյանն ընդհանրապես չի ներկայացել և նույնիսկ մեկ ժամ հանրային աշխատանք չի կատարել:

3/ Անձնական գործի նյութերից հետևում է, որ դատապարտյալ Վ.Գրիգորյանը 2018 թվականի նոյեմբերի 26-ին գրավոր հայտարարություն է տվել այն մասին, որ հրաժարվում է հանրային աշխատանքներ կատարելուց, իսկ 2018թ. դեկտեմբերի 4-ին տված բացատրությամբ վերահաստատել է իր այդ դիրքորոշումը, այսինքն՝ նա ԼՂՀ քրեակատարողական օրենսգրքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի հիմքով հանդիսանում է հանրային աշխատանքների ձևով պատիժը կրելուց չարամտորեն խուսափող անձ:

4/ «Արցախբանկ» ՓԲ ընկերության 2019թ. մարտի 25-ի թիվ 190325008735000 վճարման հանձնարարագրի համաձայն «ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված իրավախախտումների համար կիրառվող տուգանքներից և պատժամիջոցներից մուտքեր» գործարքի նպատակով Կենտրոնական գանձապետարանի հաշվեհամարին Վ.Գրիգորյանը վճարել է 270.000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը ԸԴԴ/0001/13/19 քրեական նյութով 05.04.2019թ. դատական ակտը կայացրել է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 21-րդ, 24-րդ, 370-րդ, 403-րդ, 415-րդ, 416-րդ և ԼՂՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ հոդվածների պահանջների խախտմամբ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ըստ բողոքի՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ բոլոր դեպքերում այս կամ այն որոշումը կայացնելիս դատարանը պետք է բազմակողմանի վերլուծության ենթարկի գործի բոլոր հանգամանքները և չկայացնի այնպիսի որոշում, որով անձի վիճակը կվաթարանա, նա /տվյալ դեպքում՝ դատապարտյալը/ առանց անհրաժեշտության կենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման:

Ավելին, Վերաքննիչ դատարանը գտել է, որ նման հանգամանքներում տուգանքի վճարումը պետք է համարել դատավճռով նշանակված պատժի կրում, իսկ տուգանքը վճարված լինելու պայմաններում դատապարտյալի կողմից հանրային աշխատանքների կատարումը, կամ դրանք փոխարինելու մասին որոշմամբ սահմանված ժամկետով ազատագրկման ձևով նշանակված պատժի կրումը կհանգեցնի անձի կրկնակի պատժի ենթարկելուն, ինչն անթուլատրելի է:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ նման պայմաններում պետք է վճարված տուգանքի գումարի վերադարձը և դատապարտյալին ազատագրկման ձևով նշանակված պատժի ենթարկելը չի կարող համարվել արդարացի և հիմնավորված, քանի որ չի համապատասխանում պատժի նպատակներին, չի բարելավում դատապարտյալի վիճակը և չի բխում պետության շահերից, օրենսդրության տրամաբանությունից:

Բողոքաբերի պնդմամբ՝ դատապարտյալ Վ.Մ.Գրիգորյանը 300.000 ՀՀ դրամի չափով տուգանքից վճարել էր 30.000 ՀՀ դրամը, և ԱՀ ոստիկանության ՔԿՎ ՔԿՏ-ն տեղեկանք չի տվել դատապարտյալին տուգանքի գումարն ամբողջությամբ վճարված լինելու մասին, այլ 10.10.2018թ. որոշում է կայացրել Վ.Մ.Գրիգորյանի նկատմամբ նշանակված տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան միջնորդություն ներկայացնելու մասին: Դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ բավարարվել է վերոնշյալ միջնորդությունը և դատավճռով նշանակված տուգանքի չվճարված մասը՝ 270.000 ՀՀ դրամը, փոխարինվել 810 ժամ տևողությամբ հանրային աշխատանքներով, այսինքն՝ դատապարտյալ Վ.Մ.Գրիգորյանը պետք է կրեր որպես պատիժ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով որոշված հանրային աշխատանքները, որը դատապարտյալը չարամտորեն խուսափել է կատարելուց, պատճառաբանելով, որ առաջարկված աշխատանքն իրեն դուր չի եկել:

Ինչպես տուգանքը, այնպես էլ հանրային աշխատանքները, ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն, պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ: Ներկա դրությամբ դատապարտյալի նկատմամբ գործում է 24.10.18թ. դատական ակտով որոշված պատժատեսակը՝ հանրային աշխատանքները, այլ ոչ թե տուգանքը, որը փոխարինվել է:

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ նշել է, որ չպիտի կայացվի որոշում, որով անձի վիճակը կվատթարանա, և, տուգանքը վճարված լինելու պայմաններում դատապարտյալի կողմից հանրային աշխատանքների կատարումը, կամ դրանք փոխարինելու մասին որոշմամբ սահմանված ժամկետով ազատագրված անձը նշանակված պատժի կրումը կհանգեցնի անձի կրկնակի պատժի ենթարկելուն, ինչն անթույլատրելի է:

Ըստ բողոքի հեղինակի՝ ԼՂՀ քրեական օրենսգրքով որոշակի հստակ իրավապայմաններ են նախատեսված տուգանքը և հանրային աշխատանքները, որպես պատժատեսակներ, հարկադրանքի այլ միջոցներով փոխարինելու դեպքում: Տուգանքն ու հանրային աշխատանքներն այլ պատժատեսակներով փոխարինելու ինստիտուտն իրենից ներկայացնում է քրեական, քրեադատավարական և քրեակատարողական նորմերի համակարգված ամբողջություն, որը կոչված է օրենքով որոշված դեպքերում ու կարգով պատժի կատարման շրջանակներում ապահովելու հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի փոխարինումը մեկ այլ՝ օրենքով նախատեսված համապատասխան պատժով: ԼՂՀ քրեական օրենսգրքի 53-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատագրվմամբ, երբ դատապարտյալն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով փոխարինված պատժատեսակի՝ հանրային աշխատանքների կատարումից չարամտորեն խուսափում է: Այսինքն, չարամտությունը՝ որպես քրեորեն դատապարտելի սուբյեկտիվ գործոն և հասարակական առավել վտանգավոր

երևույթ, օբյեկտիվորեն հանգեցնում է փոխարինվող պատժի խստացմանը, հետևաբար նաև իրավակարգավորման արդյունավետ միջոցի գործադրմանը: Դրանով նպատակ է հետապնդվում վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, կանխել հանցագործությունները, այսինքն՝ երաշխավորել սահմանադրական կարգի հիմունքների պահպանումը: ԼՂՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի 4-րդ մասը և 53-րդ հոդվածի 6-րդ մասը բովանդակում են պատժատեսակների փոխարինման կարգավորիչ համաչափ միջոցներ, որոնցով չի խախտվում նախկին և փոխարինված պատժատեսակների միջև համամասնությունը: Դատապարտյալը չարամտորեն խուսափել է հանրային աշխատանքները կատարելուց, պատճառաբանելով, որ առաջարկված աշխատանքն իրեն դուր չի եկել, Դատարանը միաժամանակ պահպանելով հետապնդվող նպատակի և դրան հասնելու իրավական միջոցների համարժեքության սկզբունքը, իր 22.01.2019թ. ԸԻԴ/0001/13/19 որոշմամբ դատապարտյալ Վլադիմիր Գրիգորյանի նկատմամբ Դատարանի 24.10.18թ. ԸԻԴ/0020/13/19 որոշմամբ նշանակված 810 ժամ տևողությամբ հանրային աշխատանքները 8 ամիս 27 օր ժամկետով ազատազրկմամբ է փոխարինել: Դատարանի վերոնշյալ որոշման կատարման համար տրվել է կարգադրություն, և դատապարտյալը 2019թ. փետրվարի 6-ին տեղափոխվել է ԱՀ ոստիկանության քրեակատարողական վարչություն:

Բողոքաբերի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանն անհիմն կիրառել է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, պատճառաբանելով, որ տուգանքը վճարված լինելու պայմաններում դատապարտյալի կողմից հանրային աշխատանքների կատարումը, կամ դրանք փոխարինելու մասին որոշմամբ սահմանված ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի կրումը կհանգեցնի անձի կրկնակի պատժի ենթարկելուն, ինչն անթույլատրելի է, սակայն նման պարագայում կրկնակի պատժի ենթարկելու մասին խոսք լինել չի կարող, քանի որ կիրառվել է ԼՂՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի փոխարինման ինստիտուտը և կա 21.10.18թ. օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, համաձայն որի դատապարտյալ Վլադիմիր Գրիգորյանը պետք է կրեր իր նկատմամբ նշված դատական ակտով որոշված պատժատեսակը՝ հանրային աշխատանքները:

Ելնելով վերոգրալից բողոքաբերը խնդրել է բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի ԸԻԴ/0001/13/19 քրեական նյութով 05.04.2019թ. կայացրած դատական ակտը և օրինական ուժ տալ 2019թ. հունվարի 22-ի ԸԻԴ/0001/13/19 քրեական նյութով Դատարանի որոշմանը:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման միասնական դատական պրակտիկա ձևավորելու և իրավունքի զարգացման գործառնությունից:

Սույն նյութով քննության առնվող իրավական հարցադրումը հետևյալն է. արդյո՞ք դատավճռով նշանակված պատիժը՝ տուգանքը, Դատարանի որոշմամբ հանրային աշխատանքներով փոխարինելուց և նշված որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ դատապարտյալի կողմից հանրային աշխատանքները

կատարելուց հրաժարվելու դեպքում, տուգանքի գումարը վճարելը կարող է համարվել դատավճռով նշանակված պատժի կրում:

Նշված իրավական հարցադրմանը պատասխանելու համար Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում վերլուծության ենթարկել ԼՂՀ քրեական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսգրքով նշված իրավահարաբերությունները կարգավորող նորմերը ու պարզել արդյո՞ք գործող ԼՂՀ քրեական օրենսգրքի նորմերով արգելվում է հանրային աշխատանքների փոխարինումը որոշակի ժամկետով ազատազրկմամբ, այն դեպքում, երբ դատապարտյալը հրաժարվում է հանրային աշխատանքները կատարելուց, սակայն վճարել է նշանակված տուգանքի գումարը:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ: Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 53-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ՝ կալանքի կամ որոշակի ժամկետով ազատազրկման մեկ օրը հաշվարկելով հանրային աշխատանքների երեք ժամվա դիմաց:

ԱՀ Մահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.

2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.

3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.

6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով.

7) անձի անօրինական մուտքը Արցախի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են.

1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

3. Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները:

Վերը նշված իրավադրույթների վերլուծությունից բխում է, որ կոնկրետ պատժաչափով կոնկրետ պատժատեսակի նշանակումը և նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության հարցերի լուծումն իրենցից ներկայացնում են ինքնուրույն և հաջորդական փուլեր: Դատարանը պատիժ նշանակելիս պետք է ղեկավարվի օրինականության, արդարության, պատժի անհատականացման և մարդասիրության սկզբունքներով՝ հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի, հանցավորի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների պարտադիր հաշվառմամբ, ուստի, եթե հանգում է այն եզրակացության, որ նվազ խիստ պատժի նշանակմամբ հնարավոր է պատժի նպատակներին /սոցիալական արդարությունը վերականգնելուն, պատժի ենթարկված անձին ուղղելուն, հանցագործությունների իրագործումը կանխելուն/ հասնել, չի կարող նշանակել ավելի խիստ պատիժ:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուգանքը դրամական տուգանք է, որը նշանակում է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար նույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում և նույն օրենսգրքով նախատեսված սահմաններում՝ պատիժ նշանակելու պահին ԼՂՀ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից երեքհազարպատիկի չափով:

Դատապարտյալի նկատմամբ նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով, իսկ հանրային աշխատանքները՝ ազատազրկմամբ փոխարինելու օրենսդրական կարգավորումները տրված են ԼՂՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 53-րդ հոդվածի 6-րդ մասով, ԼՂՀ քրեակատարողական օրենսգրքի 26-րդ և 35-րդ հոդվածներով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ տուգանքը հանրային աշխատանքներով, իսկ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու ինստիտուտներն իրենից ներկայացնում են քրեական, քրեադատավարական և քրեակատարողական նորմերի համակարգված ամբողջություն, որը կոչված է օրենքով որոշված դեպքերում ու կարգով պատժի կատարման շրջանակներում ապահովելու հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական կարգով նշանակված

պատժի փոխարինումը մեկ այլ՝ օրենքով նախատեսված ավելի խիստ պատժով: Պատժի փոխարինման անհրաժեշտությունը պայմանավորված է այնպիսի հանգամանքների առկայությամբ, որպիսիք խոչընդոտում են նախկինում նշանակված պատժի կատարմանը: Խուսափելու դեպքում Գերագույն դատարանն արձանագրում է, որ պատժի կատարումից խուսափելու դեպքում փոխարինման ինստիտուտն արդեն իսկ ենթադրում է դատապարտյալի կողմից առավել խիստ պատժի կրում, սակայն փոխարինման նպատակը, ոչ թե դատապարտյալին առավել խիստ պատժի դատապարտելն է, այլ դատարանի կողմից դատավճռով նշանակված պատժի կատարումն ապահովելը՝ դատավճռով նշանակված առավել մեղմ պատժի կրման անհնարինության պատճառով, կամ դրա կատարումից հրաժարվելու դեպքում:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով տուգանքը վճարելու անհնարինության դեպքում...:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 53-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ...:

Նույն օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ պատժի կատարման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

ԼՂՀ քրեակատարողական օրենսգրքի 24-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տուգանքի գումարն ամբողջությամբ վճարելուց հետո տարածքային մարմինը դատապարտյալին տալիս է տեղեկանք՝ պատիժը կրած լինելու մասին, և այդ մասին հայտնում դատական ակտը կայացրած դատարանին...:

ԼՂՀ քրեակատարողական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որպես պատժից ազատման հիմք սահմանում է դատարանի դատավճռով նշանակված պատիժն ամբողջությամբ կրելը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում՝ ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը, դատավճիռ՝ դատական նիստում կայացված առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի որոշումներն ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության, նրա նկատմամբ պատիժ կիրառելու կամ չկիրառելու և այլ հարցերով:

ԼՂՀ քրեակատարողական օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն.

1. Պատիժը կրելու կարգն ու պայմանները խախտելու դեպքում տարածքային մարմինը դատապարտյալին նախազգուշացնում է օրենքի սահմանված պատասխանատվության մասին:

2...

3. Հանրային աշխատանքների ձևով պատիժը կրելուց չարամտորեն խուսափող է համարվում այն դատապարտյալը, ով՝

1) մեկ ամսվա ընթացքում կատարել է հանրային աշխատաժամերի հաշվառման քարտով նախատեսված աշխատանքների իննսուն տոկոսից պակաս հանրային աշխատանքներ՝ առանց հարգելի պատճառի.

2...

3...

4) հրաժարվում է հանրային աշխատանքներ կատարելուց:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը ենթակա է փոխարինման կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ, ընդ որում դատապարտյալը համարվում է հանրային աշխատանքների կատարումից չարամտորեն խուսափող, եթե մեկ ամսվա ընթացքում կատարել է հանրային աշխատաժամերի հաշվառման քարտով նախատեսված աշխատանքների իննսուն տոկոսից պակաս հանրային աշխատանքներ՝ առանց հարգելի պատճառի, կամ հրաժարվում է հանրային աշխատանքներ կատարելուց:

Վերոնշյալ իրավական նորմերից հետևում է, որ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինվում է տուգանքը վճարելու անհնարինության դեպքում, իսկ հանրային աշխատանքները կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ՝ այն կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում:

Անդրադառնալով սույն նյութի փաստական հանգամանքներին՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն նյութով դատապարտյալ Վ.Մ.Գրիգորյանը 2018թ. նոյեմբերի 26-ին գրավոր հայտարարություն է տվել այն մասին, որ հրաժարվում է Դատարանի 2018թ. հոկտեմբերի 24-ի որոշմամբ նշանակված 810 ժամ հանրային աշխատանքները կատարելուց, իսկ 2018թ. դեկտեմբերին 4-ին տված բացատրությամբ վերահաստատվել է իր այդ դիրքորոշումը, ուստի իրավացիորեն Դատարանը 2019թ. հունվարի 22-ի որոշմամբ նշանակված հանրային աշխատանքները փոխարինել է 8 ամիս 27 օր ժամկետով ազատազրկմամբ, իսկ Վերաքննիչ դատարանը՝ արձանագրելով, որ դատապարտյալն իր նկատմամբ նշանակված պատիժը կրել է ամբողջությամբ՝ լրիվությամբ վճարելով դատավճռով նշանակված տուգանքը, ուստի վերացել է նրա նկատմամբ Դատարանի դատավճռով տուգանքի ձևով նշանակված և հանրային աշխատանքներով փոխարինված պատժի չկրած մասը՝ 810 ժամը, ազատազրկմամբ փոխարինելու անհրաժեշտությունը և հաշվի առնելով, որ արդեն իսկ ապահովվել է դատապարտյալի նկատմամբ դատավճռով նշանակված պատժի կատարումը և իրացվել են պատժի նպատակները, գտել է, որ Դատարանի 2019թ. հունվարի 22-ի որոշումը պետք է բեկանել և քրեական նյութի վարույթը կարճել՝ դատավճռով նշանակված պատիժը դատապարտյալի կողմից ամբողջովին կրած լինելու հիմքով:

Գերագույն դատարանը գտնում է, որ անթույլատրելի է հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինված լինելու պարագայում տուգանքը վճարված լինելը համարել պատժի կրում ու նման պայմաններում պետական բյուջե վճարված տուգանքի գումարը ենթակա է վերադարձման,

իսկ դատապարտյալը պետք է կրի Դատարանի որոշմամբ փոխարինված պատիժը՝ ազատագրելու մասին:

Վերոգրյալի հիման վրա Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն նյութով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական օրենքի սխալ մեկնաբանում, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին: Հետևաբար, նշված հանգամանքը ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի հիման վրա հիմք է Վերաքննիչ դատարանի 2019թ. ապրիլի 5-ի որոշումը բեկանելու և Դատարանի 2019թ. հունվարի 22-ի որոշմանն ուժ տալու համար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ, 438-րդ, 440-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԱՀ գլխավոր դատախազի տեղակալ Ս.Հակոբյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի 2019թ. ապրիլի 5-ի որոշումը և օրինական ուժ տալ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2019թ. հունվարի 22-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն

ստորագրություն

ստորագրություն

ստորագրություն

ստորագրություն

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կ.ՂԱՐԱՅԱՆ